№ 157 ԿԻՐԱԿԻ ՅՈՒԼԻՍԻ 23

1906

ԿԻՐԱԿԻ ՅՈՒԼԻՍԻ 23 № 157

ԵՐԵՍՈՒՆԶՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Դաւիթ, Յովհաննէս, Նազարէթ և Յակոբ Բասենցեանները խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին իրանց սիրելի և անմոռանալի եղբօր-դստեր՝ 3-րդ գիմնազիայի 5-րդ դասատան աշակերտուհի՝

ԱՆԱՀԻՏԻ

վաղաժամ մահը, որը տեղի ունեցաւ հինգշաբթի, յուլիսի 20-ին։ Յուղարկաւորութիւնը կիրակի, յուլիսի 23-ին, առաւօտեան 10 ժամին իր բնակարանից (Գիորգիեվսկի հրապարակ № 4.) դէպի Մէյդանի ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 2—2

Վշտահար Խաչատուր և Շուշանիկ Բասենցեանները խորին վշտով յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին, իրանց սիրելի դստեր՝ 3-րդ իգական գիմնազիայի 5-րդ դասարանի աշակերտուհի՝

ԱՆԱՀԻՏԻ

վաղաժամ մահը, որը տեղի ունեցաւ հինգշաբթի, յուլիսի 20-ին։ իր բնակարանից (Գիորգիեվսկի հրապարակ № 4)։ Յուղարկաւորութիւնը կիրակի, յուլիսի 23-ին, առաւօտեան ժամը10-ին դէպի Մէյդանի ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 2—2

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Գ. ՋԱԼԽՈՒՇԵԱՆԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ
Հայերէն լեզուով
Թարգմ. Ս. Նազարեանի, հրատարակութիւն Բ. Ա. Մարտիրոսեանցի
ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.
(Օգտից մի մասը յատկացնվում է վերջին դէպքերից վնասվածներին)
Գումարով գնողներին ըուբլուն 20% զեղչ ճանապարհածախսով։
Դիմել Թիֆլիսի գրավաճառներին կամ հրատարակչին Թիֆլիս՝ Головинскій проспектъ, табачній магазинъ կամ Բաթում Набережная ул. Բ. Ա. Մարտիրոսեանցին։ տռ 2—2

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
„ԽԱԹԱԲԱԼԱ"
Երգիծական-սատիրական շաբաթաթերթի բաժանորդագրութիւնը
Տարեկան գինն է Թիֆլիսում 4 ր., դուրսը՝ 5 ր., 1/2 տարվայ գինն է Թիֆլիսում 2 ր., դուրսը՝ 2 ր. 50 կ., երեք ամսվանը 1 ր., դուրսը՝ 1 ր. 25 կ.։
Ծան.—Սկզբում, մտադրվելով «Խաթաբալան» երկու շաբաթը մի անգամ լոյս ընծայել, տարեկան գինը որոշել էինք 2 ր. և 2 ր. 50 կ.։ Բայց այժմ, քանի որ այն շաբաթաթերթ դարձրինք, այդ պատճառով էլ գինը կրկնապատկում ենք։
Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, редакція «Хатабала».
Շաբաթ, յուլիսի 22-ին, լոյս տեսաւ № 7.
Խմբագիր-հրատարակող՝ Աստ. Երիցեան

Քիմիկօ-բակտերիօլօգիական ինստիտուտ
ԲԺ. Ֆ. Մ. ԲԼԻՒՄԵՆՏԱԼԻ
Մօսկվայում
ՇԻՃՈՒԿՆԵՐ (сыворотки) սկարլատինայի (Մօզէրի մեթօդով), դիֆտերիտի, ռեվմատիզմի դէմ (Menzer'y-ի մեթօդով) դիզենտերիյնայա, պուէրպերալնայա, ստրեպտօկօկկօվայա (պօլիվալենտնայա) ստաֆիլօկօկկօվայա և բազեդօվայա (Մեբիուսի մեթօդով) միշտ գտնվում են
պրօվիզօր
Ա. Ս. ԿԼԵԲԱՆՍԿՈՒ
ՔԻՄԻԿՕ-ԲԱԿՏԵՐԻՕԼՕԳԻԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏՈՒՄ
Ընդունվում են մէզի, մաղձի հետազօտութիւններ. իշխ. Վօրօնցօվի արձանի մօտ, հեռախօս № 389։
(կ. տռ) 10—10

ՀՐԱՒԷՐ

Համաձայն ազգիս Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակների և Թեմիս սրբազան առաջնորդի կարգադրութեան՝ առաջիկայ կիրակի, յուլիսի 23-ին, ցերեկվայ 12 ժամին Աւետեաց Ջգրաշէն ս. Աստուածածին եկեղեցում լինելու է երեք պատուիրակի ընտրութիւնը, որոնք յետոյ ընտրելու են չորս պատգամաւոր օգոստոսի 15-ին գումարվելիք ռուսահայոց եկեղեցական սահմանադիր ժողովին մասնակցելու համար։ Ուստի խնդրում ենք յիշեալ Ջգրաշէն եկեղեցու 21 տարեկանից սկսած բոլոր արական և իգական սեռին պատկանող ծխականներին (քանիսը որ կան իւրաքանչիւր տանը) շնորհ բերել եկեղեցի նշանակեալ ժամին ընտրութեանը մասնակցելու։ Այս ժողովը զբաղվելու է նաև Ջգրաշէնի երկսեռ դպրոցների հարցով, ուստի և համարվելու է շարունակութիւն նախկին ժողովների՝ միմիայն այս վերջին հարցի վերաբերմամբ։

Աւետեաց Ջգրաշէն եկեղեցու՝

Գէորգ աւագ քահ. Աբուլեանց
Երեցփոխ՝ Ալէք. Քալանթարեան
(ջ. կ.) 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրութեան կողմից. Ընտրող ժողովրդին. Դարձեալ մի քանի նկատողութիւն. Վերջին տեղեկութիւններ. Ժողովրդական ցուցակներ. Ընտրութիւնների շուրջը. Հենրիխ Գեյցէր. Մամուլ։ Շարժումներ. Կենտրոնական ժողովի առիթով. Պետական Դումայի արձակման առիթով. Օգոստոսի 15-ի ժողովը. Երեւանի Թուրք պատգամաւորը. Տեղեկութիւն ուսուցիչներից. Իմ պատասխանը. Նամակներ Խմբագրութեան Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Յիշեցնում ենք մեր բաժանորդներին, որ լրանում է գրված պայմանաժամը և մենք ստիպված կը լինենք դադարեցնել համարների ուղարկումը այն բոլոր անձերին, որոնք չեն ուղարկի բաժանորդագրութեան այն մասը, որ վերաբերում է յուլիս և առաջիկայ ամիսներին։

Յամենայն դէպս, թող զանցառու եղող անձինք դժգոհ չը լինեն խմբագրութիւնից, որ նա դադարեցնում է լրագրի առաքումը։

Մենք երբէք լրագիրը չենք ուղարկել ոչ-բաժանորդին և թող մեզ ազատ պահեն անյարմար դրութիւնից։ Լրագիր ստացողը վիրաւորված հարցնում է՝ միթէ մենք չը վստահացանք նրա վրա և դադարեցրինք լրագրի առաքումը, մինչդեռ չեն մտածում, որ մենք ուզում ենք ազատ լինել մի ուրիշ մեղադրանքից թէ՝ մենք ուղարկում ենք լրագիր այն անձին, որ չէ լրացրել իր բաժանորդավճարը և որը գուցէ մտադիր չէ ստանալ լրագիրը։

Պայմանաժամից յետոյ մենք կը դադարեցնենք լրագրի առաքումը։ Եւ թող մեր բաժանորդները ներողութիւն կրեն վաղօրօք հոգալ լրագիր ստանալու կարգադրութիւնների մասին։

Դարձեալ յիշեցնում ենք։

ԸՆՏՐՈՂ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Ընտրեցէք նրան, ով կարող է ձեր իղձերը, ձեր ծրագիրները ներկայացնել հարազատութեամբ կենտրոնական ժողովին։

Ձեր իւրաքանչիւրի կամքը ընտրութեան օրը վերջանում է և նա դառնում է մի քուէ, որը ընկնում է այս և այն քուէտուփի մէջ։

Միատեսակ քուէների բազմութիւնը դարձնելու է պատգամաւոր այս ու այն անձին, որը և պէտք է ձեր թարգմանը, ձեր մտքերի արտայայտողը լինի կենտրոնական ժողովում։

Եւ ուրեմն պարզ է, որ այդ քուէին պէտք է վերաբերվէք ամեն լրջութեամբ և սրբութեամբ։

Թող ոչ մի կողմնակի հաշիւ, ոչ մի խնամութիւն, ոչ մի անձնական միտում չազդէ ձեր քուէի վրա և թող քուէն տրվի խղճապէս արժանաւորին։

Թեկնածուն պէտք է լինի լայն հայեացքի տէր, ազատ մտածողութեան ընդունակ, լուրջ գործավար, որ կարող լինի ըմբռնել մեր ժամանակի պահանջները։

Ծանրակշիռ գործը պահանջում է լուրջ վերաբերմունք։

Մոռացէք նեղը, անձնականը, և առաջնորդված հասարակական շահերի պաշտպանութեան զգացմունքով, տուէք ձեր քուէն շիտակ և լուրջ գործողներին։

Ա. Ք.

ԴԱՐՁԵԱԼ ՄԻ ՔԱՆԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

I

Կարապետ վարդապետը նորից հանդէս եկաւ պաշտպանելու իր միաբանների խնդրագիրը և իր բռնած դիրքը դէպի կենտրոնական ժողովը։ «Մշակի» վերջին չորս համարներում (№ № 154, 155, 156 և 157) իր «Օգոստոսի 15-ի ժողովը» յօդուածում նա ուզում է արդարացնել խնդրագրի այն կէտը, որտեղ 14 հոգեւորականները մերժում են կենտրոնական ժողովը և նրան դարձնում են «մասնաւոր և յանձնարարականատար մի ժողով»։

Պէտք է նկատել, որ 14 հոգեւորականներից 10-ը նոր խնդրագրով յետ վերցրին իրանց նախկին խնդրագիրը և թողին միայն մի կէտ, այն է, որ հոգեւորականները որոշ աստիճան մասնակցութիւն ունենան կենտրոնական ժողովի մէջ։

Այդ հանգամանքը փոքր ինչ փոխում է իրերի դրութիւնը և Կարապետ վարդապետը չէր կարող թողնել առանց յիշատակելու նրան։ Եւ ահա նա յայտնում է, թէ միւս հոգեւորականները ինչ ուզում են ասեն և ինչպէս ուզում են մտածեն, իսկ նա ինքը մնում է հաւատարիմ այն խմբագրութեան, որով լոյս է տեսել 14 միաբանների խնդրագիրը։

II

Եթէ հաստատամտութիւնը լաւ բան է, ինչով բացատրել սակայն Կ. Վ.-ի նախկին յօդուածների և ներկայ յօդուածների բնաւորութեան մէջ եղած տարբերութիւնը։ Առաջին յօդուածների շարքում Կ. Վ. խօսում էր կենտրոնական ժողովի մասին, ընդունելով նրան կենտրոնականի իրաւասութեամբ և հեղինակութեամբ, իսկ վերջին յօդուածներում նա ձգտում է ապացուցել, որ կենտրոնական աւված ժողովը պէտք է լինի մասնաւոր յանձնարարականատար մի ժողով։

Առաջ բերենք մի քանի խօսքեր.

«Նա կը լինի մասնաւոր ժողով, որովհետեւ համազգային չէ, այլ միայն ռուսահայերի ներկայացուցիչներից կազմած՝ այն էլ ըստ ամենայնի թերի կերպով. յանձնարարականատար՝ որովհետեւ միայն ընտրող ժողովրդի յանձնարարութիւնները պէտք է հանդէս բերէ, նրա տրամադրութեան, իղձերի և գաղափարների արտայայտութիւնը տայ, առանց այնպիսի որոշումներ անելու, որոնք անմիջական գործադրութիւն գտնէին»։

Հարցնում ենք. միթէ սա համոզիչ մի պատճառաբանութիւն է։

Եւ մենք զարմանում ենք, որ նա իբրեւ լուրջ առարկութիւն հանդէս է դրված։

III

Յօդուածի շարունակութեան մէջ Կարապետ վարդապետը աշխատելով ցոյց տալ առաջիկայ ժողովի պարագամունքների լրջութիւնը և բարդութիւնը, գալիս է այն եզրակացութեան, որ այդ իսկ պատճառով ժողովը պէտք է լինի մասնաւոր և յանձնարարականատար։

Խնդրեմ ասացէք. միթէ մի քաղաքային խորհուրդ, մի զեմստվային ժողով հէնց այն պատճառով, որ նա չունի պատրաստ զեկուցագրեր, պէտք է իրան հրատարակէ «մասնաւոր և յանձնարարականատար ժողով»։

Այդ տրամաբանութեամբ Պետական Դուման, երբ ժողովվեց և տեսաւ, որ նա դեռ չունի պատրաստ օրինագծեր, պէտք է իսկոյն անուանէր իրան «մասնաւոր և յանձնարարականատար ժողով»։

Միթէ ծրագիրների լինել չը լինելը կարող է պատճառ լինել որեւէ ժողովի համար կորցնել իր իրաւասութիւնը։

Անկասկած՝ ոչ։

Եւ ուրեմն Կարապետ վարդապետի առարկութիւնները ամենեւին չեն կարող դրական նշանակութիւն ունենալ։

IV

Կարապետ վարդապետը երկար խօսում է կենտրոնական ժողովի նստաշրջաններ կազմելու և զանազան խնդիրների նշանակութեան մասին, սակայն դրանք ոչ մի կապ չունեն այն հարցի հետ՝ թէ ժողովը լինի կենտրոնական թէ մասնաւոր։

Օրինակ, եթէ ժողովը կոչվի մասնաւոր և յանձնարարականատար, միթէ դրանով որ և է թեթեւութիւն կը լինի պարագամունքների մէջ, որ և և դիւրութիւններ կը ստեղծվեն Էջմիածնի կենցաղավարական պայմաններում, միթէ կը պակասեն պատգամաւորների ծախքերը, կամ Էջմիածնի կալուածքների մասին չափազանցրած լուրերը կը չքանան։ Մինչդեռ Կ. Վ.-ն ամբողջ սիւնակներ է նուիրել այդ տեսակ հարցերի, որոնք անմիջապէս չեն վերաբերում շօշափած հարցի էութեան։

Երբ ժողովը կոչված է կենտրոնական, նա դարձել է մի սարսափեցնող բան. իսկ բաւական է նրան անուանել մասնաւոր և յանձնարարականատար, և ամեն բան լաւ կերթայ։

Այդ չեղաւ.

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուշու հետ հեռագրական հաղորդակցութիւնը նորից կտրվեց, ուրբաթ օր, յուլիսի 21-ին առաւօտ։

Այդ պատճառով մենք անկարող ենք հաղորդել տեղեկութիւններ աղէտի շրջանից։

Հեռագրաթելը փչացել է դարձեալ Աղդամի և Շուշու միջեւ։ Յայտնի չէ թէ որտեղ է կտրվել թելը, Շուշու քաղաքի շրջանում, թէ գիւղերի սահմաններում։

Պետերբուրգից, Վլադիկավկազից, Բագուից և ուրիշ տեղերից դիմել են Թիֆլիս հեռագիրներով և հարցրել Շուշու դէպքերի մասին։ Թիֆլիսից պատասխանել են, որ Շուշու շրջանում նախայարձակ եղել են թուրքերը, որոնք միեւնոյն ժամանակ յարձակումներ են գործել զօրքի, պօստի և վարչական պաշտօնեաների վրա։

Շուշու դէպքերի վերաբերեալ։ Հինգշաբթի, յուլիսի 20-ին, ցերեկվայ ժամը 12-ին Անդրկովկասի շէյխ-ուլ-իսլամը և մուֆթին ներկայացան Փոխարքայի քաղաքացիական մասի օգնականի պաշտօնակատար Միցկեվիչին, խնդրելով միջնորդել Փոխարքայի առաջ անյապաղ դադարեցնել Շուշու կոտորածը, յետ կանչել գեն. Գօլօշչապօվին և այդ գործի քննութիւն նշանակել։ Նրանք ներկայացրին Միցկեվիչին Շուշուց և Աղդամից յուլիսի 19-ից ստացած հեռագիրները, որոնք նկարագրում են մահմեդականների անելանելի-ցաւալի վիճակը։ Փոխարքայի օգնականը վճռական կերպով յայտնեց, որ գեն. Գօլօշչապօվի տեղափոխելու մասին խօսք չէ կարող լինել. կոտորածը կը դադարեցնվի ուժով, և կոտորածը առաջանալու մէջ մեղադրվողներին պարզելու և նրանց դատի ենթարկելու համար քննութիւն կը նշանակվի։

Ոսկանապատ, յուլիսի 19-ին

Այսօր գիւղի սահմաններում, Նովան կոչվող ճանապարհի վրա, գաւառապետի օգնական պ. Լակատօշը աջողեցնում է կալանաւորել երեք թուրք աւազակների, որոնցից մէկը տխրահռչակ Թօփալ-Հասանլուեցի է, Իսմայիլ Ղարա-Ուսուբ օղլին. սա մեղադրվում է անցեալ յունիսի 12-ին Մանուէլ Միրզայեանցի սպանման գործում։ Աւազակների մօտ բռնվել է մի խուրջին, վրան ասեղնագործած «Յովսէփ» անունը...

Նիկ. Գրիգորեան

Ջօրղալու, 19 յուլիսի

Յայտնի աւազակապետ Ղադիր Բէքբալայ-Իբադուլլա-օղլին, դօլլասարլուեցի, որը իր խմբով՝ մօտ 500 ձիաւորներով եկել էր Բադա գիւղը աւերելու՝ փոխարէն պատժվելու, համաձայն մեր տուած շարունակ խնդիրներին, ստացել է լիազօրութիւն ամբողջ Գանձակի գաւառի 4 մասի թուրք տանուտէրի և ազգաբնակութեան վրա, ստանալով գաւառապետ Աւալիանուց չափազանց մեծ ռոճիկ և երեք գծանի հրացաններով զինված մի խումբ թիկնապահներ թուրքերից։ Բացի Բադա գիւղը, այդ աւազակը իր խմբով կողոպտել տարել է Ղազախ քաղաքի, Դալլար կայարանի և Գետաբէգի խանութների ապրանքի մեծ մասը, տալով բաժին գաւառապետ Աւալիանուն։ Իսկ Ղադիրը որքան անմեղ երեխաների արիւն է թափել՝ աւելորդ եմ համարում գրել։

Ե.

Գանձակից հաղորդում են հետեւեալ անցքի մասին, որը տեղի է ունեցել Գանձակի գաւառում, յունիսի վերջերից սկսած, հայ-թուրքական թշնամութեան հողի վրա։

Յունիսի 27-ին զինված թուրք ամբոխը յարձակվել է Բայանի հասարակութեան հովիւների վրա։ Նրանց մէջ սկսվել է հրացանաձգութիւն, որի միջոցին թուրքերը քշել տարել են 37 գլուխ եղջիւրաւոր անասուններ, սպանվել է 4 ձի և վիրաւորված է մի կով։

Քննութիւնը հաստատել է, որ յանցաւորները եղել են յայտնի աւազակներ Սօյուն Հախվերդի-օղլին, Փաշա Ղասումալի-օղլին և Թօփալ-Հասանլուեցի թուրքերը։

Շուշու գաւառից Թիֆլիսում տեղեկութիւն է ստացվել, որ անցեալ յունիս ամսվայ վերջերում, անյայտ զինված հայեր, Խորամուրթ գիւղի բնակիչներ, մօտաւորապէս 100 հոգուց բաղկացած, յարձակում են գործել Սէիդլու և Ջումարմախլու գիւղի հովիւների վրա, որոնցից քշել տարել են 60 գլուխ տաւար։ Յարձակվողների թւում ճանաչված են խորամուրթցի չորս բնակիչներ։

Նոյն տեղից գրում են, որ յունիսի վերջերում թուրքերի զինված մի խումբ յարձակվել է Սարուբէջիշ հայ գիւղի հովիւների վրա և քշել տարել է 96 գլուխ եղջիւրաւոր մեծ անասուններ։ Թուրքերի ձեռքից ազատվել են հովիւները՝ փախչելով։

Շուշու գաւառից հաղորդում են, որ անցեալ յունիս ամսի վերջերում 2-րդ Պօլտաւեան գնդի առաջին հարիւրեակի հրամանատար Հաջիեվը և ոստիկանական պրիստաւ Ֆատը, տեղեկութիւն ստանալով, որ Գիւլափլուում հայերի ու թուրքերի մէջ հրացանաձգութիւն կայ, անմիջապէս ուղեւորվեցին դէպքի տեղը։ Ցրելով թուրքերին, նրանք նոյն նպատակով գնացին դէպի հայերի կողմը, լեռները, ուր դիրքեր էին գրաւել հայերի ույժերը։ Չը նայելով կօզակների տուած ազդանշանին, հայերը այնուամենայնիւ սկսեցին կրակել կօզակների վրա։ Կօզակների տուած պատասխան-համազարկին հայերը պատասխանեցին նոյն ձեւով, որի ժամանակ թեթեւ վիրաւորվեց Ֆատը։ Կարճատեւ հրացանաձգութիւնից յետոյ կօզակները դուրս քշեցին հայերին երեք դիրքերից։ Մահացու կերպով վիրաւորված են երկու կօզակ և մէկն էլ թեթեւ կերպով։ Յանցաւորներին որոնելու համար միջոցներ են ձեռք առնվել։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐ

Յունիսի 7-ին տուած № 693 կաթողիկոսական հրահանգ-կոնդակի համաձայն այս օգոստոսի 15-ին Էջմիածնում գումարվելու է ռուսահայերի ընտրած 60 պատգամաւորների կենտրոնական ժողովը՝ քննելու մի քանի «անյետաձգելի կարեւորութիւն ունեցող խնդիրներ»։ Դրա համար արդէն ամեն տեղ կատարվում են պատուիրակների ու պատգամաւորների ընտրութիւններ։

Սակայն հէնց առաջին քայլից իսկոյն նըկատվում է մի փոքրիկ դժուարութիւն, որը առաջ է գալիս եկեղեցիներում ժողովրդական ցուցակների բացակայութիւնից, որով անհնարին է լինում որոշել թէ ահաստարակ մի որեւէ եկեղեցու մեծ ու փոքր ծխականների թիւը և թէ նրանցից չափահաս ընտրողներինը։

Ինչպէս յայտնի է, վերոյիշեալ կոնդակի համաձայն ընտրող կարող են լինել (ինչպէս և ընտրելի) երկու սեռի այն ծխականները, որոնք լրացրել են 21 տարին, կամ ծնված են ոչ ուշ քան 1884-85 թւականը և ժողովն օրինաւոր կարող է համարվել, եթէ ներկայ կը լինեն բոլոր չափահասների ոչ պակաս քան 1/5 մասը (§ 5)։ Որոշված է նոյնպէս և այն, որ ամեն մի 1000 հոգու համար պէտք է ընտրել մի պատուիրակ (§ 4)։

Այստեղից հետեւում է, որ ուրեմն դժուար է իմանալ թէ արդեօք օրինական թիւ են կազմում մի ժողովում ներկայ ընտրողները թէ ոչ, եթէ նախապէս յայտնի չը լինի այդ եկեղեցու բոլոր չափահաս ծխականների թիւը։ Նոյնը կարելի է ասել և ընտրելի պատուիրակների թւի մասին. մինչեւ յայտնի չը լինի բոլոր չափահաս և անչափահաս ծխականների ընդհանուր թիւը, չէ կարելի որոշել թէ քանի պատուիրակ կարող են ընտրել այդ եկեղեցու ծխականները։ Երբեմն 20-30 հոգու տարբերութիւնը կարող է նշանակութիւն ունենալ պատուիրակների թիւը մէկով աւելի կամ պակաս դարձնելու համար. այսպէս, օրինակ, 1480 հոգի ժողովուրդ ունեցող եկեղեցին տալիս է 1 պատուիրակ, իսկ 1500 կամ 1510 հոգի ունեցողը՝ երկու։

Աւելորդ է մինչեւ անգամ յիշել, որ մեր եկեղեցիներից գուցէ ոչ մէկն էլ մինչեւ այժմ չէ մտածել կազմել իր կենդանի ժողովրդի թէ ընդհանուր և թէ առանձնապէս չափահաս ծխականների (երկու սեռի) ցուցակը. այն ինչ այժմ դա արդէն աւելի քան անհրաժեշտ է։ Ճիշտ է, քահանաներն ունեն իրանց ծխականների ցուցակները, բայց դրանք շատ թերի ու անկատար են և մեծ մասամբ ցոյց են տալիս ծուխերը (տնօրհնէքի համար) և արական անդամների անունները (տօնը կատարելու համար)։

Պարզ է, որ սրանից յետոյ լինելիք ընտրութիւնների ժամանակ այլ եւս անկարելի է ղեկավարվել քահանաների այդ կիսատ-պըռատ ցուցակներով։ Անհրաժեշտ է, որ ամեն մի եկեղեցու հոգաբարձութիւն կազմէ իր ժողովրդի կանոնաւոր ու լրիւ ցուցակը, որի մէջ նշանակված լինեն ամեն մի անձնաւորութեան անուն-ազգանունը հետ միասին, և նրա ծննդեան թւականը, պարապմունքը, գրագիտութիւնը, բնակավայրն ու հասցէն և այլն։ Այդպիսի ցուցակով միայն ամեն ժամանակ կարելի կը լինի անել անհրաժեշտ ստուգութիւնները և հեշտութեամբ որոշել թէ ժողովականների չափահասութիւնն ու օրինական թիւը և թէ նրանց ընտրելի պատուիրակների քանակութիւնը։

Այսպիսով մտցնելով եկեղեցական գործավարութեան մէջ և ժողովրդական ցուցակները, մենք առ այժմ կըստանանք ամեն եկեղեցում կանոնաւոր պահվող հետեւեալ տոմարները.

ա) Չափաբերական մատեան ամեն մի ծնվողի ու մեռնողի ժամանակագրութեան համար։

բ) Մուտքի և ելքի տոմար ժապաւենված, եկեղեցու դրամական հաշուապահութեան համար։

գ) Եկեղեցու շարժական և անշարժ կայքերի ինվենտար, և

դ) Երկու սեռի ժողովրդի ընդհանուր և չափահասների ցուցակ։

Սրանից առաջին երկուսն արդէն կան մեր եկեղեցիներում և պահվում են աւելի կամ պակաս կարգաւորութեամբ. անհրաժեշտ է մտցնել և վերջինները. և եթէ եկեղեցական հոգաբարձութիւններն ինքնաբերաբար չեն անի այդ բանը, այն ժամանակ կարիք կը լինի, որ Էջմիածինը անի այդ կարգադրութիւնն առհասարակ բոլոր եկեղեցիների համար։

Այսուհետեւ ամեն եկեղեցի պէտք է ունենայ թէ իր բոլոր շարժական ու անշարժ կայքերի և թէ իր բոլոր չափահաս ու անչափահաս ծխականների լրիւ ու կանոնաւոր ցուցակները։

Լ. Մարկոսեան

ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

—Մոսկվայի նահանգական զեմստվային վարչութեան մէջ, «Народн. Газ.» լրագրի ասելով, յուլիսի 16-ին տեղեկութիւն է ստացվել, որ Մոսկվայի, Կալուգայի, Տուլայի, Օրլովի և Ռեազանի նահանգներում գիւղացիական յուզումներ են սկսվել։ Հողատէրերը սարսափահար փախչում են իրանց կալուածքներից. սպասում են, որ անկարգութիւններ տեղի կ՚ունենան։

—Յուլիսի 15-ին Պետերբուրգում, ցերեկվայ ժամի 11-ին, Բուսսելի տպարանն են մտնում մի խումբ անյայտ մարդիկ։ Տպարանի բաժանմունքի բոլոր մուտքերը գրաւելով, այդ անծանօթները կալանաւորում են տպարանի կառավարչին, մետրանպաժին և երեք վարպետի, իսկ բանւորներին հրամայում են փակել պատուհանները, շարունակել իրանց աշխատանքները և արհեստանոցից դուրս չը գալ։ Անծանօթները տպագրում են այդտեղ Պետական Դումայի նախկին անդամների դիմումը ժողովրդին՝ 150,0000 օրինակ, որին ստորագրել են 220 պատգամաւորներ, և երեկոյեան ժամի 5-ին վերջացնելով՝ վերցնում տանում են։ Աշխատանքի ժամանակ տպարան մտնողներին բոլորին էլ կալանաւորում էին։ Անծանօթ խումբը զինված էր բրաունինգներով և մաուզերի ատրճանակներով։ Տպագրելու ժամանակ տպարանի առջեւից անցնում էր եկեղեցական թափօր, որին ուղեկցում էին ձիաւոր և հետեւակ ոստիկանների խմբերը, և նոյն իսկ տպարանի դարպասի հանդէպ մաղթանք էլ կատարեցին։ Տպարանի դէմը գօրօդօվօյ էլ էր կանգնած։ Հեռախօսի մօտ ամբողջ ժամանակը նրանցից մէկը պահապան է կանգնած եղել։ Հէնց որ տպարանական վարչութեան որեւէ մի անդամ կանչում էին հեռախօսով, անծանօթները պահելով նրան տանում էին հեռախօսի մօտ և նրանք խօսում էին բրաունինգների սպառնալիքի ներքոյ։ Հեռանալուց առաջ անծանօթները հրամայեցին բոլոր բանւորներին առանձնանալ արհեստանոցներից մէկի մէջ և տեղից չը շարժվել ¼ ժամվայ ընթացքում։

—Օդեսսայից «Бирж. Вѣд.»-ին գրում են, որ նաւահանգստի բանւորների գործադուլ անող մասը թոյլ չը տուեց ոստիկանութեանը բանալ մաքսատան կշիռները։ Պրիստաւը դիմեց զօրախմբի օֆիցէրին և օգնութիւն խնդրեց։ Օֆիցէրը երեք անգամ նախազգուշացնելուց յետոյ, հրամայեց կրակել։ Զինւորները հրաժարվեցին կրակել։ Անմիջապէս տարան նրանց այնտեղից։

—Սիմֆերօպօլից հեռագրում են «XX Вѣкъ»-ին, որ նահանգապետի մօտ խորհրդակցութիւն է տեղի ունեցել տեղական զօրքերի ներկայացուցիչների մասնակցութեամբ՝ որոշելու թէ ինչ միջոցներ ձեռք առնեն, եթէ անկարգութիւններ սկսվելու լինեն։ Ստացած տեղեկութիւններից երեւում է, որ Դումայի արձակման պատճառով ամբողջ նահանգում տրամադրութիւնը ճնշված է։ Գիւղերում միտինգներ են լինում։ Սիմֆերօպօլի առաջադիմական լրագիրները ամենայն օր գրաւվում են։ Սպասում են, որ տեղական մամուլի դէմ մի շարք խստութիւններ են գործադրվելու։

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Դերբենդ, յուլիսի 7-ին.—Կիրակի, ամսիս 16-ին, ուսումնարանի դահլիճում կայացաւ երրորդ ու վերջին ծխական ժողովը մի պատուիրակ ընտրելու համար։ Այս ժողովը իր բազմամարդութեամբ ուղղակի աչքի էր ընկնում. մասնակցում էին մեծ թւով օրիորդներ ու կանայք, որոնց մասնակցութիւնը կարծես թէ մի տեսակ գեղեցկութիւն էր տալիս, որովհետեւ առաջին անգամն է, երբ հայ կինը հրապարակ է գալիս հասարակական գործերում, իր խօսքը ասելու և իր ձայնը տալու։ Ողջունում ենք ի սրտէ կանանց այդ փառաւոր յաղթանակը։ Գործակալ հ. Պանդուխտ բացելով ժողովը՝ առաջարկեց ընտրել Նախագահ ու քարտուղար։ Միաձայն ընտրվեցին նախագահ Տիգրան քահանայ Վարդանեանցը, իսկ քարտուղար Ղեւոնդ Պապայեանցը։ Ժողովին մասնակցողների թիւը հասնում էր մօտ 200-ից իսկ ձայնատուութեամբ օգտվողները միայն 136 հ. էին։ Գաղտնի քուէարկութեամբ, պատուիրակ ընտրվեց Տիգրան քահանայ Վարդանեանցը՝ ստանալով 85 ձայն, իսկ փոխանորդ Կոստանդին Ղազարեանցը՝ ստանալով 42 ձայն։

—

Ղազախի գաւառում ռուսահայոց առաջին եկեղեցական կենտրոնական ժողովի պատգամաւոր ընտրվել է բժ. Տէր-Միքայէլեանը։

—

Կարս, 18 յուլիսի

Յուլիսի 16-ին պատուիրակների ընտրութեան համար հրաւիրված ժողովը պակվեց խայտառակ վախճանով։ Այն անձինք, որոնք ղեկավարվում են «Նպատակը արդարացնում է միջոցները» նշանաբանով այս ընտրութիւններում մի անգամ ևս ասպարէզ եկան իրանց այլանդակ դէմքերով, նորից ապացուցանելու, թէ ինչպէս յեղափոխութեան դիմակի տակ ընդունակ են շահագործելու խաւար մասսայի տգիտութիւնը, այդ մասսային ծառայեցնելու իրանց թայֆայական շահերին։ Աւելորդ չեմ համարում այստեղ թուել այն միջոցներից մի քանիսը, որոնցով յիշեալ թայֆան կամեցաւ ընտրութիւնների ժամանակ ժողովրդի ազատ կամքին բռնանալ։ 1) Հէնց սկզբից աշխատեցին քաղաքում ապրող գիւղացիների և մի քանի արհեստաւորների (կօշկակար և դերձակ) յարաբերութիւնները լարել դէպի միւս դասակարգերը զանազան ստութիւններով և խոստումներով, թիւր հասկացողութիւն տալ, թէ միւս դասակարգերը համագումարում ձեր շահերը ոտնատակ տալով, իրանց շահերն են առաջ տանելու, ուրեմն այս ինչ պարոններին պէտք է ձայն տաք, որ նրանք էջմիածնապատկան կալուածները ձեզ գիւղացիներիդ ձրիաբար բաժանեն և այլն։ 2) Դեռ ևս ընտրութեան օրից մի քանի օր առաջ զինուորների ձեռքով ցրվեցին թուղթիկները, որոնց վրա տպված էր թեկնածուների անունները, միաժամանակ խստիւ պատուիրելով, որ պարտաւոր են ներկայանալ ժողովին և կօմիտէի առաջարկած թեկնածուներին ձայն տալ։ 3) Ժողովի ժամանակ, դեռ ևս պաշտօնապէս զբաղված, վաղօրօք տպված կոչը բաժանեցին ժողովրդի մէջ, որով առաջարկվում էր ընտրել իր թեկնածուներին։ 4) Անհագին քանակութեամբ անչափահասներ, որոնք ձեռք էին բարձրացնում, ձայն տալիս, ճնշում գործ դնում ժողովրդի վրա, դիտաւորեալ քաշ էին տուել հետները ժողովատեղին։ 5) Կարսի վիճակի յաջորդ Մամբրէ վարդապետի այն պահանջին, թէ ոչ-իրաւատէրները պէտք է դուրս գան ժողովականների միջից, որպէս զի հնարաւոր լինի նախագահ ընտրել և ընտրութեանն անցնել, «ոչ, ոչ, ոչ» աղաղակներով էին պատասխանում և անհետևանք թողնում նրա պահանջը։ 6) Գիւղացիներին, դասընկերին (անգրագէտ) սպառնալիքի տակ առաջարկում էին առանձին սենեակ և այնտեղ նրանց թերթիկների վրա գրում իրանց ուզած թեկնածուների անունները։ 7) Յաճախ բարձրանում էին ամբիոն և յայտարարում ժողովրդին, որ ոչ ոքից չը վախենան, արժանաւոր թեկնածուներին ձայն տան։ Ժողովրդի գիտակից մասը շատ լաւ ըմբռնում էր, թէ դրանք ինչ մանեօվրներ էին. Նրանք լաւ հասկանում էին, որ այդ պարոններն ուզում են ասել, թէ մենք այստեղ ենք, չը համարձակվէք մեր որոշումներին դէմ գնալ։ 8) Երբ ծխականների մեծամասնութիւնը այդ բոլորից զզված ժողովը յայտարարեց անվաւեր և սկսեց հեռանալ, աջողացրին դռները փակել և մնացած դժգոհներին բռնի կերպով պահեցին մինչև իրանց ապօրէնի ընտրութեան վերջը։ 9) Աւելի անպատկառ ձևով վարվեցին յաջորդ Մամբրէ վարդապետի հետ, երբ նա ուզում էր հեռանալ, յայտարարելով որ այդ ընտրութիւնն անվաւեր է և ինքը այդ մասին հեռագրելու է Վեհափառին. բռունցքներով և մահակներով սպառնացին նրան մնալ այնտեղ մինչև իրանցից մէկին նախագահ ընտրելը, և նա ստիպված մնաց։

Ահա այս բոլորից յետոյ ժողովականների մեծամասնութիւնը չէր կարող մասնակից լինել այդօրինակ ապօրինի ընտրութիւններին. «ամօթէ ռուսահայոց պատգամաւորական ժողով անունը տալ այն ժողովին, որի պատգամաւորները նշանակված են և ոչ ընտրված» ասելով՝ հեռացան և բազմաստորագիր հեռագրով բողոքեցին Վեհափառին։

Պակաս դեր չեն խաղացել և գիւղերում։ Գործողներից մէկը առաջարկել է գործակալ քահանաներին թոյլ տալ շրջանային կոմիտէներ ընտրող լիազօրներին պատգամաւորի ընտրութիւն կատարել։ Թէև երրորդ օրն է, ինչ կատարվել է յիշեալ ապօրինի ընտրութիւնը, բայց հետևանքի մասին դեռ ևս չէ յայտնած պաշտօնական իշխանութեանը և ոչ ոքին յայտնի չէ, թէ ովքեր են ընտրված, սակայն մարգարէ չեղած վստահ կարելի է ասել, որ առանց բացառութեան կոմիտէի առաջարկած թեկնածուներն են անցած։ Պակաս հետաքրքիր չէ հասարակութեան համար ծանօթանալ այդ թեկնածուներից մի քանիսի հասարակական դիրքի հետ.

1. Լ. Աբրահամեան, 2. Ա. Տէր-Գրիգորեան, 3. Զօրնի Եգոր (օղեվաճառ), 4. Գ. Ղազարեան, 5. Արամ Ջամբազեան (պատուաւոր բազմնիօյ), 6. Ա. Ստամբօլցեան, 7. Գ. Սահակեան (խօզէին-բուրժուա), 8. Հ. Տրդատեան (նոյնպէս), 9. Ա. Ալոյեան (նոյնպէս), 10. Արսէն աղա Յովսէփեան (գիւղացի կուլակ), 11. Ս. Եղիազեան (ինձ անծանօթ գիւղացի), 12. Ա. Գիզզաշեան (նոյնպէս), 13. Հ. Պետրոսեան (նոյնպէս), 14. Հ. Ղարիբեան (խօզէին-բուրժուա), 15. Գ. Ղամարեան (անչափահաս) և 16. Ա. Տէր-Աղայեան։

Ճիշտ է, թէև դաշնակցականները միշտ պնդում են, որ իրանց դիվիզն է բանուոր պրօլետարիատի շահերը պաշտպանել, կռուել նրանց կեղեքիչների դէմ, կռիւ մղել ХОЗЯИНЪ-ների. գիւղական կուլակների դէմ, բայց, ինչպէս տեսնում էք, այս ցուցակում առանձին տեղ է տուած աղա-կուլակներին ու հարստահարիչ խօզէիններին։ Երևի իրերի դրութիւնն է ստիպում այդ կուսակցութեանը հովանաւորել կուլակ-խօզէիններին—բանուորին հարստահարողին։

Ս. Հ.

Յ. Գ. Նամակս վերջացրել էի, երբ յայտնեցին, որ Վեհափառը հեռագրով բեկանել է ապօրինի ընտրութիւնը։

Նոյն

† ՀԱՅՆՐԻԽ ԳԵԼՑԵՐ

Ամսիս 11-ին (ն. տ.), ինչպէս հաղորդում են գերմանական լրագիրները, մեռել է Ենայի համալսարանի նշանաւոր պատմաբան և հռչակաւոր հայագէտ պրոֆեսօր դոկտ. Հայնրիխ Գելցերը։

Յանձին Հ. Գելցերի պատմական գիտութիւնը ընդհանրապէս և հայագիտութիւնը մասնաւորապէս կորցնում է իր խոշոր ներկայացուցիչներից մէկին, որի տեղը դեռ երկար ժամանակ բաց կը մնայ գիտական ասպարիզում։

Պրոֆ. դոկտ. Հայնրիխ Գելցերը, որ 1878 թւից ի վեր Ենայի գերմանական համալսարանի հնադարեան պատմութեան և կլասիկ լեզուների ուսուցչապետն էր, յայտնի պատմաբան և քաղաքական գործիչ Յովհաննէս Գելցերի որդին էր և ծնվել է 1847 թ. Գերմանիայի մայրաքաղաք Բերլինում։

Նա իր բարձրագոյն կրթութիւնը ստացել էր Գերմանիայի մի քանի համալսարաններում, որտեղ մասնագիտաբար ուսումնասիրել էր հնադարեան ազգերի պատմութիւնը և կլասիկ լեզուները։

Համալսարանը աւարտելուց յետոյ Հ. Գելցերը նշանակվում է պրիվատ-դոցենտ Գերմանական Շվէյցարիայի Բազել քաղաքի և Հայդելբերգի համալսարաններում հնադարեան պատմութեան և կլասիկ լեզուագիտութեան համար, որտեղ մնում է մինչև 1878 թ.։ Այդ թւականին նա հրաւիրվում է Ենա, որտեղի համալսարանում նա նշանակվում է հին դարու ազգերի պատմութեան և կլասիկ լեզուների ուսուցչապետ։ Այդ պաշտօնում նա մնում է մինչև իր կեանքի վերջը և արտադրում է գիտական խոշոր նշանակութիւն ունեցող մի շարք պատմական և լեզուագիտական ուսումնասիրութիւններ, որոնք մինչև այժմ էլ պատուաւոր տեղ են բռնում պատմական և լեզուագիտական գրականութեան մէջ։

Սակայն Հ. Գելցերի գիտական խոշոր ուսումնասիրութիւնները վերաբերում են բիւզանդական պատմութեան, որի լուսաբանութեան գործում գիտական մեծ դեր է կատարել հանգուցեալ հայագէտը։

Հ. Գելցերը բիւզանդական պատմութեան գիտնական գրականութեան աշխարհահռչակ կօրիֆէյներից մէկն է, որ երկրորդ տեղն է գրաւում գերմանացի բիւզանդագէտ պրոֆ. Կրումբախէրից յետոյ, որը ներկայումս Մինխէնի համալսարանի ուսուցչապետն է։

Այդ ժինեայ Կրումբախէրն է հրատարակել բիւզանդական պատմութեան ուսումնասիրութեան համար «Geschichte der byzantinischen Literatur» (բիւզանդական գրականութեան պատմութիւնը) վերնագրով կլասիկ աշխատութիւնը մի քանի նշանաւոր բիւզանդագէտների աշխատակցութեամբ, որի մէջ առաջին տեղը բռնում է Հայնրիխ Գելցերը։

Հանգուցեալը գրել է այդ աշխատութեան այն մասը, որի վերնագիրն է Abriss der byzantinischen Kaisergeschichte (բիւզանդական կայսրների համառօտ պատմութիւնը)։ Այդ պատմութեան ուսումնասիրութեան համար Հ. Գելցերը առաջին անգամ օգտվել է արևելեան ազգերի, մանաւանդ հայկական պատմական աղբիւրներից և հէնց դրա մէջ է կայանում նրա գիտական խոշոր ծառայութիւններից մէկը։ Իր պատմական ուսումնասիրութեան մէջ հանգուցեալ հայագէտը մանրամասն կերպով ուսումնասիրել է բիւզանդական պատմութեան այն շրջանը, որի մէջ նշանաւոր դեր են կատարում հայկական ծագում ունեցող կայսրները։ Այդ շրջանը Բիւզանդիայի պատմութեան մէջ յայտնի է բիւզանդական պատմութեան հայկական դինաստիայի կամ հարստութեան շրջան։ Հ. Գելցերի բիւզանդական կայսրների համառօտ պատմութիւնը լոյս է տեսել նաև հայերէն Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսիսեանի թարգմանութեամբ։

Բացի դրանից Հ. Գելցերը ունի նաև մի քանի ուսումնասիրութիւններ, որոնք շատ լաւ լուսաբանում են հռոմէական բիւզանդական տէրութեան պետական և եկեղեցական կազմակերպութիւնը։ Հանգուցեալ գիտնականը բիւզանդական պատմութեան վերաբերող գրեթէ իր բոլոր ուսումնասիրութիւնների մէջ առաջին անգամ աշխատել է լուսաբանել այն հարցը, թէ առ հասարակ հին Արևելքը ինչպիսի ազդեցութիւն է ունեցել բիւզանդական պատմութեան և կուլտուրայի վրա։

Իբրև հայագէտ Հ. Գելցերը Եւրոպայի այն սակաւաթիւ գիտնականներին է պատկանում, որոնք հայոց պատմութեան ուսումնասիրութեան համար գիտական խոշոր ծառայութիւն են մատուցել։ Նա գրել է հայոց հեթանոսական կրօնի և քրիստոնէական եկեղեցու սկզբնաւորութեան մասին երկու նշանաւոր ուսումնասիրութիւններ, որոնք արդէն թարգմանված են հայերէն և որոնց մասին մենք իր ժամանակին հաղորդել ենք «Մշակ»-ին։

Հ. Գելցերի մօտ են աշակերտել մեր դպրոցական ասպարէզում ներկայումս գործող շատ հայագէտ ուսուցիչներ, որոնց համար հանգուցեալը եղել է մի նշանաւոր ղեկավար։ Հ. Գելցերի պատմական նշանաւոր աշխատութիւնների շարքին է պատկանում և «Յուլիոս Աֆրիկանոս և բիւզանդական ժամանակագրութիւն» վերնագրով աշխատութիւնը։

Հ. Գելցերը մի քանի անգամ գիտնական նպատակով ճանապարհորդել է Յունաստանում և Թիւրքիայում և այդ ճանապարհորդութիւնների արդիւնքը նա հրատարակել է իր մի քանի գրուածքներում, որտեղ խօսում է ժամանակակից Թիւրքիայի ժողովրդի, հոգևորականութեան և քաղաքակրթութեան մասին և մասնաւորապէս նկարագրում է թիւրքահայերի ներկայ անտանելի դրութիւնը։

Հանգուցեալը եւրօպացի յայտնի հայասէրներից մէկն էր, և տողերիս գրողը, որ եղել է նրա աշակերտը, շատ անգամ լսել է այն զգացմունքները, որ նա սովորաբար անում էր հայերի հասցէին գիտնական ամբիոնից և սիրում էր իր ընտանեկան շրջանում շրջապատված լինել հայ աշակերտներով, որոնց վերաբերմամբ Հ. Գելցերը շատ անգամ հայրական խնամատարութիւն էր ցոյց տալիս։

Հանգուցեալը մտադիր էր նաև հրատարակել Փաւստոս Բիւզանդի գերմաներէն թարգմանութիւնը, որ հաւանօրէն անկատար կը մնայ։

Լ. Բաբայեան

ՄԱՄՈՒԼ

Նոր-Նախիջևանի «Նոր-Կեանք» թերթը, խօսելով Էջմիածնի կենտրոնական ժողովի մասին, գալիս է այն եզրակացութեան, որ այդ ժողովը իր կազմով և պայմաններով չը պէտք է կարողանայ ժողովրդի լիակատար ցանկութեան և կամքի արտայայտիչը լինել.

«Նախ՝ հրահանգ-կօնդակի հակասական բնաւորութեան պատճառով, որով ժխտվում է անմիջական ձայնատուութիւնը և նրա թերութիւնների պատճառով, որ չէ շեշտած կանանց մասնակցութիւնը, որն այնքան թիւրիմացութիւնների և յետադէմ հոգևորականների կողմից տհաս բացատրութիւնների պատճառ է լինում։

Երկրորդ՝ 60 պատգամաւորը ռուսահայերիս համար իսկական ներկայացուցիչ լինել չեն կարող՝ թէ թւով քիչ լինելու և թէ քառանգամ սիստեմով ընտրված չը լինելու պատճառով։

Երրորդ՝ ժողովրդին միջոց ու ժամանակ չէ տրված նախընտրական պայքար մղելու, այսինքն նրան հնարաւորութիւն չէ տուած, որ կարողանայ իր իսկական շահերը պաշտպանող ու գիտակցող ներկայացուցիչ ընտրել»։

Մի և նոյն թերթը բողոքում է այն զրկանքի դէմ, որ ենթարկվել է Բեսարաբիայի թեմը, որին տրված է միայն մի ձայնի իրաւունք.

«Աչքից հեռու—մտքից հեռու։ Ուղիղ որ։ Մեզ մոռանում են, կամ, լաւագոյն դէպքում, մեզ զրկում են։ Օրէնք հրատարակվեց, որ այսուհետև հայոց դպրոցները վերադարձնում են հայ ժողովրդին։ Ամբողջ Կովկասը շարժվեց, այնտեղ կենդանութիւն ընկաւ, ուսումնարաններ բացվեցան՝—ժողովուրդը իր իրաւունքի տէրը դարձաւ։

«Մենք էլ կենդանացանք, մենք էլ շարժվեցանք, մենք էլ ուզեցինք բանալ մեր դպրոցները, որ կամովին փակել էինք՝ օտարին ձեռքը չը տալու համար։ Անցաւ տարին. անցաւ և աւելի... բայց մենք դարձեալ մնացինք իրաւազուրկ, առանց դպրոցների՝—որովհետև մեզ մոռացել էին, մեր դպրոցները թողել էին օտարի ձեռքը և մինչև այժմ էլ շարունակվում է նոյնը։

«Ահա վերջապէս նաև թարմագոյն դէպք.—ս. Էջմիածնում կենտրոնական ժողով է գումարվելու և իւրաքանչիւր թեմ պէտք է իր ժողովրդի թւի համեմատ պատգամաւոր ուղարկէ։ Մենք Ռուսաստանում ունինք միայն վեց թեմ. հինգը պիտի ուղարկեն 59 պատգամաւոր, իսկ մեր թեմը—միայն մէկ պատգամաւոր։

«Ինչու, ինչ պատճառով է այդ զրկողութիւնը։ Վեհափառի կոնդակով իւրաքանչիւր 20,000 հայ պէտք է ընտրէ մի պատգամաւոր։ Մենք ուրիշ թեմերի վերաբերմամբ խօսք չունինք, բայց մեր թեմի վերաբերմամբ դա կատարեալ զրկողութիւն է։ Նոյն իսկ Վեհափառի կոնդակի զօրութեամբ մեր յաջորդութիւնը միայն պէտք է երկու պատգամաւոր ունենայ։

«Ո՛չ, դա զրկողութիւն է, դա անիրաւութիւն է։ Ս. Էջմիածնում վճռվելու են մեզ համար էական նշանակութիւն ունեցող խնդիրներ և մենք ուզում ենք, մենք պահանջում ենք, որ մեր ձայնն էլ լսելի լինի այնտեղ, մենք պահանջում ենք, որ մեր յաջորդութիւնից ընտրվի երկու պատգամաւոր՝ կենտրոն ունենալով Նախիջևանը, իսկ թեմի միւս քաղաքներից մէկ պատգամաւոր կենտրոն ունենալով Սիմֆերոպոլը, որ ամեն յարմարութիւն ունի երկրորդ կենտրոն լինելու։

«Անշուշտ մենք երբեք չենք կարող ենթադրել, թէ ս. Էջմիածինը մեզ դիտմամբ է զրկում։ Բայց դա անհոգութեան և անգիտակցութեան նշան է։ Աչքից հեռու—մտքից հեռու...

«Այո, մեզ մոռանում են, մեզ զրկում»։

*

«С. Пет. Вѣд.» լրագրի № 156-ում տպագրված է «Հայոց հարցը Ռուսաստանում» վերնագրով մի յօդուած, որ գրել է Մ. Ալլահվերդեան։ Դա ամփոփումն է երեք գրքոյկների բովանդակութեան, որոնք վերջերս հրատարակվել են հայոց հարցի մասին, այն է 1) Ամֆիթէատրովի «Հայոց հարցը», 2) Ջիվելեկեանի «Հայերը Ռուսաստանում» և 3) Գ. Ջալալեանի «Հայոց հարցը Ռուսաստանում»։

Մեր ընթերցողները արդէն ծանօթ են Ամֆիթէատրովի և Գ. Ջալալեանի գրքոյկների հետ, ուստի մի քանի խօսք կասենք միայն Ջիվելեկեանի գրքոյկի մասին։

Հեղինակը քննում է հայոց հարցը հետևեալ ներածութեամբ. «Եթէ հայերը իրանց վրա են դարձնում կուլտուրական աշխարհի ուշադրութիւնը, դա նշանակում է, որ նրանց վրա որևէ մի աղէտ է պայթել. ամենից աւելի դա նշանակում է, թէ նրանց ջարդում են որևէ մի տեղ։ Հայոց հարցը, իսկապէս, կայանում է նրանում, որ հայերը հրաժարվում են համբուրել այն ձեռքը, որ հարուածներ է հասցնում նրանց, իսկ նրանցից այդ պահանջում են յանուն պետական բարձր նկատումների։ Այդպէս է եղել միշտ Թիւրքիայում, այդպէս է գործը այժմ և Ռուսիայում»։

Ապա հեղինակը այն միտքն է զարգացնում, որ «ռուսականացումը ճանաչվել է միշտ մեծագանում միակ միջոց, ընդունակ շաղկապել ծայրաերկիրը կենտրոնի հետ»։ Այդ քաղաքականութիւնը գործադրվում էր մանաւանդ հայերի վերաբերմամբ։ Եւ սակայն մենք տեսնում ենք, որ ազգային հալածանքների պատմութիւնը Ռուսաստանում բոլորովին պարզ կերպով ցոյց տուեց ռուսականացման քաղաքականութեան անյուսալիութիւնը ծայրերում. տեսնում ենք և այն, որ այդ ձգտումները հասցնում էին ծայրայեղութեան, օրինակ հայ դպրոցների և բարեգործական հաստատութիւնների փակումն ամեն տեղ, և այնուամենայնիւ չէին հասնում իրանց նպատակին և առաջ էին բերում միայն ժողովրդական մասսաների մտաւոր մակերևոյթի և տնտեսական բարեկեցութեան արուեստական իջեցումը։

Բրօշիւրի վերջում, Ջիվելեկեանը ասում է. «Ի՞նչ կը լինի այսուհետև։ Չէ՞ որ Կովկասը ամբողջովին կրակի մէջ է։ Գուրիա, Կարտալինիա, Կախեթիա, Հայաստան, Թիֆլիս, երկաթուղի, արդիւնաբերական կենտրոններ—ամեն բան յուզվում է, ամեն տեղ արիւն է թափվում։ Պէտք է պատուաստել կուլտուրան Կովկասին և ոչ տնկել այդտեղ մարդատեցութիւնը։ Իսկ այդ հնարաւոր է միայն մի շաւղով. պէտք է տալ կուլտուրական գործունէութեան լիակատար ազատութիւն։ Նրա առաջ ոչ մի բան կանգ չի առնի»։

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ

I

Իր սկզբնաւորութեան օրից՝ առաջին անգամն է, որ մեր ազգային եկեղեցին, առայժմ Ռուսիայի սահմաններում, հանդէս է գալիս իբրև մի համայնք, մի ամբողջութիւն ինքն իրանով զբաղվելու, իր գործերը տնօրինելու։

Մեր եկեղեցու այս ժողովրդավար հոգին ամփոփված է քրիստոնէական կրօնի հաւասարութեան, Քրիստոսով միմեանց հետ հաւասարապէս եղբայրացած դաւանանքի մէջ։ Մեր առաջին քարոզիչները, մեր եկեղեցու կազմակերպողները առանձին շեշտով շեշտել են այս հոգին և մեր ժողովուրդը, որքան նիրհել են ժամանակի քաղաքական պայմանները և հասկացողութեան աստիճանները, պահպանել է այդ հոգին։

Ամեն մի կարգ, մի կանոն, ում կողմից և հաստատված լինի, ենթակայ է կենդանի եկեղեցու լիազօր իշխանութեանը, որ իրաւունք ունի, երբ կամենայ, փոխելու և նորը, իր բարոյական և իմացողական պահանջներին համապատասխանը սահմանելու։

Հակառակորդների միջև այժմ բերված առարկութիւնները քննութեան չեն դիմանայ։

Եթէ հնումը մեր ազգային եկեղեցական ժողովները հրաւիրողը, վարողը և այդ ժողովների մէջ «ի պաշտօնէ» մասնակցողները հոգևորականներ են եղել և սրանց հետ ամեն յայտնի իշխան, մելիք, իւզբաշի նոյնպէս «ի պաշտօնէ» մասնակցող են եղել, այդ չէ նշանակում թէ արդար է եղել և թէ մեր օրերում նոյնը պիտի լինի։ Հնումը ժողովուրդը մարդի տեղ, բանի տեղ չէ եղել—հնումը քիչ շատ գրագէտ, հասկացող, գիտուն աշխարհականներ չեն եղել։ Հնումը իսկական համայնքի, ժողովրդի կամքը արդարապէս արտայայտող քառանգամ ֆօրմուլայով ընտրված ներկայացուցչութիւն չէ եղել։ Ուստի որ ժամանակում որ ձևով արտայայտվում է ժողովրդի կամեցողութիւնը—այն ձևն էլ պիտի գործադրվի։ Էականը ժողովրդի կամեցողութիւնն է, հաւաքական արտայայտութիւնն է, իսկ ձևը ենթակայ է փոփոխութեան։

Անտեղի է նաև հակառակորդների այն առարկութիւնը, թէ քաղաքը իրաւունք ունենալով հիւանդանոց շինելու, իրան իրաւունք չը պիտի համարի և բժշկի բուժելու մասնագիտական պարտաւորութիւնների մէջ մտնելու։ Հիւանդանոցի կարիքը և արժէքը հասկացող քաղաքը իրան չի էլ ների մտնելու բժշկի մասնագիտական պարտաւորութիւնների մէջ. բայց քաղաքը միշտ իր իրաւունքը կը համարի բժշկին ընտրել ու արձակել, վարձատրել ու գնահատել։

Այսպէս և կենտրոնական ժողովը, իբրև ռուսահայ ժողովրդի կամքի և մտածողութեան արտայայտութիւն, կիմանայ իւրաքանչիւր խնդրի լուծումը տալ կատարելու յատուկ մասնագէտների ձեռքով, կիմանայ տեղական և ընդհանրական նշանակութիւն ունեցող խնդիրները միմեանցից բաժանելու, կը գիտակցի իր իրաւունքների սահմանները շատ առաւել իմաստութեամբ, քան ներում են նրանց կասկածի ենթարկել բողոքաւորները։

Միակողմանի և անարդար է եղել, երբ եկեղեցական խնդիրները հնումը մենավաճառօրէն կամ գլխաւորաբար վճռել և կարգադրել են հոգևորականները։ Այդ պայմաններում միշտ վտանգված է եղել և բնականաբար կը լինէր բուն ժողովրդի կաղմը։ Դեռ մօտիկ անցեալում հանգուցեալ Մակար կաթողիկոս իր տուած դպրոցական կանոնների մէջ զրկեց ուսուցիչներին ծխական ձայնից և արգելեց նրանց հոգաբարձուների ընտրութեան մէջ մասնակցութիւն ունենալու իրաւունքից։ Այսօրվայ բողոքող հայերից ոչ մէկը ձայն չը հանեց. գուցէ և շատերը դրանցից մասնակցած էին այդ կանոնի կազմելու խորհրդին։ Ինչու ուսուցիչը զրկվում է դպրոցների կառավարիչների ընտրութեան իրաւունքից, իսկ հոգևորականութիւնը պիտի պնդի մեր եկեղեցիների կառավարիչների ընտրութիւնը իր ձեռքին պահելու վրա։

Էջմիածնի միաբանութեան համար պահանջվում է Հայրապետին անպատճառ խորհրդական լինելու առանձին իրաւունքներ այս հիման վրա, որ այնտեղից՝ «են ելնում Հայաստանեայց ս. եկեղեցու ամեն աստիճանի պաշտօնեաները»։ Բայց պատմական մի թիւրիմացութիւնն էլ հէնց այդ է. ինչու պիտի այդ միաբանութիւնից ելնեն Հայաստանեայց կենդանի եկեղեցու պաշտօնեաները։ Կենդանի եկեղեցին ինքը իր միջից պիտի ընտրէ իր ամեն կարգի և աստիճանի պաշտօնեաներին։

Հայաստանեայց եկեղեցու կանոնով ձեռնադրութիւնը ոչ պարգև է և ոչ վարձատրութիւն, այլ ժողովրդի կողմից կամ վանական միաբանութիւնից որոշ պաշտօնի համար ընտրված անձին պաշտօնի մէջ ձեռնադրութեամբ հաստատելու և օծութեամբ այդ պաշտօնն արդիւնաւոր կացուցանելու շնորհաբաշխութեան մի գործողութիւն։ Ուրեմն նախ՝ բաց պաշտօն—ապա՝ ընտրութիւն և վերջը՝ ձեռնադրութիւն։

Ամեն մի պարապ ձեռնադրութիւն, անպաշտօն օծումն, ժողովրդի կողմից նախապէս չընտրված անձի համար, խորթ է, օտար է, ներհակ է եկեղեցու հոգուն և աւելորդ բեռ մեր եկեղեցու համար։ Արդ ինչ իրաւունքով, ինչ արդարութեամբ Էջմիածնի միաբանութիւնը դեռ ևս պիտի պնդի պահել-պահպանելու իր կողմից կենդանի եկեղեցուն ամեն աստիճանի պաշտօնեաներ տալու անտրամաբան ներկայ յոռի կացութիւնը։

Այո, ընդունում եմ և խոստովանում, որ մեր ժողովրդի անունից խօսողները, պահանջ յարուցանողներն իրանց ձեռք առաջ միջոցներով դարձեալ բուն ժողովրդին մի կողմ են հրում—լռեցնում են և չեն թողնում տալու արդարութեամբ և իրանց հանդարտ և մասսային վայել լրջմտութեամբ հրապարակ գալու։ Ընդունում եմ ու շեշտում, հայ ժողովուրդը չէ, որ այսօր մասնակցում է ընտր. ժողովներին, հայ ժողովուրդը չէ, որ ընտրում է, այլ պարզապէս «դաշնակցական» և «հնչակեան» մի խումբ «ընկերներն» են, որ մենավաճառօրէն հրապարակ են ելած. նրանք են, որ ընտրում են և նրանք են, որ ընտրվում են։

Սակայն այլ կերպ առաջին քայլը չէ կարող լինել. Նրանք են, որ ժողովրդին շարժում են, ցնցում են, նրանք են, որ ժողովրդական իրաւունքների մասին պահանջներ են յարուցանում, քարոզում են, ճառում են, և նրանք են, որ աջ ու ձախ մեզ հայհոյում են, մեզ դատապարտում են։ Նրանք են, որ այժմ ղեկավարում են։

Կանգնի առաջին թափը, կանգնի «յեղափոխական» մոմենտը—ժողովուրդը տէր կը դառնայ իր իրաւունքներին, տէր կը դառնայ ասպարէզին և ինքը իսկապէս ձեռք կառնի իր իսկական իրաւունքները, կը քշէ ասպարէզից ինչպէս «ծայրայեղներին», նորածիլ «ընկերներին», այնպէս և «փափկանկատներին», հնաւանդ «տէր եղբայրներին» և կը բարեկարգէ իր տունը, իր կեանքը, իր վիճակը իր կամեցածի պէս։

Առայժմ, թէրևս ոչ շատ աջող, քայլից յետոյ, երբ հանդէս կը գայ բուն ժողովուրդն իր լուրջ ընտրութեամբ և բարենորոգչական կարգադրութիւններով, ինքը կիմանայ բարեփոխել և՛ «պօլօժէնիէն» և՛ «սինօդը» և՛ ճանաչել տալ ինչպէս տիրող կառավարութեանը, այնպէս և ամբողջ ազգին իր կամքի և մտածողութեան արդիւնք՝ կարգ ու կանոնները։

Այժմ եթէ կայ արդարև մի պարագայ, որ իսկապէս լուրջ է և արժէք բուական ծանրութեամբ հաշուի առնել—այդ կենտրոնական ժողովի ժամանակի շատ կարճութիւնն է։ Օգոստոսի 15-ը անշ առաջներիս անկված, կանգնած է և, գրեթէ, ոչ մի պատրաստ ծրագիր, ուսումնասիրութիւն չը կայ մէջ տեղում։ Մնում է ինչպէս Վեհափառ կաթողիկոսի հրաւէրը սրանց ողջունողներիս, այնպէս և բողոքողներին առանց այլևս ժամավաճառ լինելու աշխատանքի կպչել և ամեն մէկս մեր ծրագիրները, եթէ ունենք, մեր դիտողութիւնները, մեր առաջարկութիւնները մամուլի միջոցով մատուցանենք թէ ընթերցող հասարակութեան քննադատութեանը և թէ կենտրոնական ժողովի խորհրդածութեանը։

Այո, ցանկալի էր, որ եկեղեցու մէջ ոչ դասակարգային, ոչ կուսակցական և ոչ սեռի խտրութիւն ճանաչող ժողովուրդը իսկապէս ժողովներ կազմէր և ընտրութիւններ անէր, այլ ոչ այժմեան «թայֆայականութիւնը». բայց և այնպէս, «առ այժմ» խոնարհվելով տիրող արտակարգ պարագաների առաջ, չը քաշվենք մեր ձայնը, մեր ցանկութիւնները մամուլի միջոցով բարձրացնելու։ Թող այս կենտրոնական ժողովը բաղկացած լինի հէնց զուտ «դաշնակցական» պատգամաւորներից։ Մի և նոյնն է, եթէ այդ ժողովը հայ ժողովրդի ձիգ-ձիգ դարերի, անցած-գնացած փորձանքների, աղէտների մէջ կոված-կոփված բնաւորութեանը, խառնուածքին ու հոգեբանութեանը անծանօթ հանդիսանայ իր քայլերով, բնաւ անընդունելի կը մնայ ժողովրդի կողմից նրա արած՝ թէկուզ իմաստուն՝ կարգադրութիւնը։ Իսկ եթէ, ընդհակառակը, գէթ այս անգամ, այս պատմական ժամին, կիմանայ հաւատարմութեամբ թարգման լինել ոչ իր կուսակցական, այլ հայ ժողովրդի բարոյական առանձնայատուկ իղձերի ու բաղձանքների—այն ժամանակ կը մնայ մեզ երախտագիտական զգացմունքով ծափահարել անդրանիկ մեր ժողովի աջող գործունէութիւնը և լի յոյսերով թեակոխել մեր ազգային վերածնութեան նոր տարեշրջանը։

Եւ այսպէս փակած համարելով կենտրոնական ժողովի օգոստոսի 15-ին լինել չը լինելու խնդիրը, լարենք բոլորս մեր ոյժերը, նախ՝ նպաստելու, որ անպատճառ ժամանակին կայանայ ժողովը և երկրորդ որ մեր առաջարկներով, մեր ծրագիրներով, մեր դիտողութիւններով օգնելու նիւթ մատակարարենք կենտրոնական ժողովին՝ ումից և ինչպէս էլ կազմված լինի այն։

Մեր անձնական անկեղծ իղձն ու ցանկութիւնն է, որ կենտրոնական ժողովը բաղկացած լինէր մեր կեանքի այլ և այլ հոսանքներից, զանազան կերպ մտածողների ու դատողների լաւագոյն ներկայացուցիչներից. այլազան մտածողութիւնների միմեանց բաղխելուց է, որ պիտի երևան գայ ճշմարիտը ու օգտակարը։ «Համանման» մտածողների «տակտիքական» սխալները, բնաւ ցանկալի չէր, որ այժմ, այս կենտրոնական ժողովի խնդրում ևս, երևան գային իրանց սովորական տխուր արդիւնքներով։

Մեսրոպ ա.-ք. Մելեան

Բաթում

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԱՐՁԱԿՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Պաշտօնական «Россія» լրագիրը ցաւակցութիւն յայտնելով, որ կօնսերվատիվ կուսակցութիւնները բացասաբար են վերաբերվում դէպի Դուման և պահանջում են ոչնչացնել ժողովրդական ներկայացուցչութիւնը, ասում է. «Կառավարութիւնը չէ կարող և չը պէտք է յեղափոխական շաւղի վրա կանգնի և յետ վերցնի սահմանադրական իրաւունքները, որ տուել է ժողովրդին։ Նրա ամեն մի փորձը այդ ուղղութեամբ կը լինէր յեղափոխական մի գործողութիւն։ Ժխտել հասարակական ոյժերի նշանակութիւնը Ռուսաստանում և բարեմիտ հաստատակամ տարրերի գոյութիւնը ռուսաց հասարակութեան մէջ, ինչպէս որ նա ժխտում էր առաջ, կառավարութիւնը այլ ևս չէ կարող։ Նա մտադիր է ազնուաբար կատարել իր պարտքը ոչ միայն ռուսաց իշխանութեան առաջ, այլ և ռուսաց հասարակութեան առաջ, և նա այդ բանը կիրագործէ։ Պարզ է, որ ազնիւ օրինական կառավարութեան շուրջը պէտք է համախմբվեն ամենքը, ով կուսակից է միապետութեան և սեփականութեան։ Կառավարութեան մերձեցումից հեռու կը մնան գոյութիւն ունեցող ներկայ կազմի հակառակորդները, հասարակապետականները և սօցիալիստները։ Այդպիսի կուսակցութիւնների թւում չը պէտք է լինեն ռուսաց կօնսերվատիվ տարրերը, որոնք, չը ճանաչելով մեր տէրութեան մէջ կատարված օրինական փոփոխութիւնը, միայն տկարացնում են ռուսաց տէրութեան ոյժը, փոխանակ ամբողջ ոյժով պաշտպանելու նրան»։

—«Рѣчь» լրագրի Լոնդոնի թղթակիցը բոլորովին արժանահաւատ աղբիւրից տեղեկացել է, որ անմիջապէս բրիտանական պարլամենտում սըր Էդուարդ Գրէյի արտասանած ճառից յետոյ, որ պաշտպանում էր ռուսաց կառավարութեանը Բէլոստոկի ջարդի առիթով, պրէմիէր Բաններմանը վճռեց մեղմացնել պարլամենտի և հասարակութեան վրա արած այդ ճառի տպաւորութիւն նրանով, որ նա անհրաժեշտ համարեց անձամբ բանալ միջպարլամենտական կօնֆերենցիան և ողջունել առանձնապէս ջերմ կերպով Դումայի ներկայացուցիչներին։ Այդ տրամադրութեան հետ կապ ունի Դումային ուղերձ ներկայացնելու ներկայումս իրագործվող իղձը, «Tribune» լրագրի նախաձեռնութեամբ Լոնդոնի բոլոր ազատամիտ հրատարակութիւնների խմբագիրները կազմել են ուղերձ նախ Դումայի նախագահին ներկայացնելու համար, որի մէջ իրանց ջերմ համակրանքն են յայտնում Դումային և ռուսաց ժողովրդին՝ պարլամենտական կազմը իրագործելու համար վարող նրա կռուին։ Այդ ուղերձը պէտք է ներկայացնէր անգլիական պարլամենտի անդամներից կազմված մի առանձին պաշտօնական պատգամաւորութիւն։ Դումայի անսպասելի կերպով փակումը հարց առաջացրեց այդ շարժման շարունակութեան մասին։ Լրագիրների խմբագրութիւնները այդ առիթով ստանում են ահագին քանակութեամբ ստորագրութիւններ։ Նրանց մէջ կան պարլամենտի անդամներ և հասարակական գործիչներ, որոնց թւում լորդեր՝ Բրասսէյ, Կուրտնէյ, Էվէրէյ, Հերֆորդի եպիսկոպոսը, հռչակաւոր բելլետրիստ Մերէդիտ և բազմաթիւ անդամներ պարլամենտից և ուրիշ հրատարակութիւնների խմբագիրներ։

—Loc. Anz.-ի պարիզեան թղթակիցը հաղորդում է, որ մօտ ժամանակներս մտադրութիւն կայ Ռուսաստանում հիմնել մի առանձին կենտրոնական կառավարչական կոմիտէ Դումայի նոր ընտրութիւնները նախապատրաստելու համար։ Ներկայ պրէմիէր Ստոլիպինը, լրագրի ասելով, այն կարծիքն ունի, որ Վիտտէի կաբինետը նախընտրական ագիտացիայի համար շատ քիչ բան է արել և ազգաբնակութեան վստահելի մասը չնչին աջակցութիւն էր ստանում. ահա դրանով է բացատրվում Դումայի օպպօզիցիօն լինելը։ Իսկ պրէմիէր Ստոլիպինը կարծում է, որ ընտրութիւններին ուղղութիւն տալու համար պէտք է գործադրվեն գործունեայ, ժողովրդին լաւ ճանաչող և լիովին վստահելի պաշտօնեաներ։ Լրագիրը այնուհետև հաղորդում է պրեմիէրի ասած խօսքերը, որ կառավարութիւնը կապացուցանէ Եւրօպային, որ արևմտեան Եւրօպայի ձևերին հլու կերպով նմանելը Ռուսաստանի համար քաղաքացիական իմաստութիւն չէ ներկայացնում։ Մենք յոյս ունենք,—իբր թէ ասել է պրեմիէրը,—որ թէ մայրաքաղաքում և թէ գաւառներում մենք կարող կը լինենք գտնել բաւականաչափ պատրիօտներ, իսկական ռուս մարդիկ, և որ այդ պահպանողական տարրերը, որ մինչև այժմ սարսափահար էին, կը մտնեն ժողովրդական ներկայացուցչութեան մէջ։

«Рѣчь»

—Եկատերինօսլավից գրում են «Рус. Вѣд.» լրագրին, որ Դումայի արձակման ազդեցութեան ներքոյ բանուորների մէջ նկատվում է տենդենցիա դադարեցնել առայժմ իրանց տնտեսական վիճակի համար մղվող կռիւը, և արդէն կոչեր լսվում ընտրելու բանուորական խորհրդի պատգամաւորներ ազատութեան համար մարտնչելու նպատակով։ Եկատերինօսլավում, Իւզօվկայում, Ալէքսանդրովսկում, Նիժնեդնէպրովսկում և Խորտից կղզու միտինգներ են տեղի ունենում։

ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի ԺՈՂՈՎԸ

Իբրև անյետաձգելի խնդիր կարելի էր նկատել ժողովի համար և այն, թէ ինչպէս պէտք է առաջ տարվեն ներկայումս հայրապետութեան գործերը, ինչպէ՞ս պէտք է առաջ տարվեն այդպիսի գործեր մանաւանդ աթոռը թափուր եղած ժամանակ, ինչպէս պէտք է կառավարվեն այսուհետև մեր վանքերը և ինչ գործնական նպատակների ծառայեն և այլն։ Բայց ամեն մի այսպիսի խնդիր շօշափելիս կերևայ դարձեալ, կարծում եմ, որ ժողովի համար դժուար և վտանգաւոր կը լինի խորհրդակցական դերից ելնել և «կանոնադրական» իրաւունքներ բանեցնել ու բացարձակ վճիռներ արձակել։ Ոմանք հարց են գրել, օրինակ, որ առաջնորդական ու փոխանորդական պաշտօնների համար կարելի է անխտիր աշխարհականների և քահանաների ընտրել։ Կարո՞ղ է արդեօք ռուսահայոց մասնաւոր թէկուզ «կարգադրիչ և տնօրէն» ժողովն այդպիսի հարց վճռել. կարո՞ղ է վճռել, թէ ինչպէս պէտք է աշխարհականին կամ քահանային ձեռնադրել ու համապատասխան աստիճան տալ. թէ ինչ պէտք է անեն ամուսնուն զաւակներին, եթէ նա ամուսնացած է։

Հարցեր շատ կան և մի դրական եզրակացութեան գալու համար պէտք էր հանգամանօրէն բացատրել գոնէ այսպիսի հիմնական հարցեր, թէ քրիստոնէական ոգու և մեր եկեղեցու անցեալի համաձայն՝ հեղինակաւոր անձերի (կաթողիկոսների, առաջնորդների) և հեղինակաւոր ժողովների ինչպիսի յարաբերութիւն ցանկալի է եկեղեցական վարչութեան մէջ. թէ ինչ պէտք է լինի ներկայումս հոգևորականի դերը և ինչ հետևանքներ առաջ կը գան, եթէ բոլորովին դուրս ձգել կամ վանել նրան կեանքի ասպարիզից։ Կաթօլիկ եկեղեցին անձի հեղինակութիւնը այն աստիճան բարձրացրեց, որ իբրև դաւանանք է ընդունել պապի անսխալականութիւնը. օրթօդօքս եկեղեցին առաջ է քաշել ժողովները և հէնց առաջին քրիստոնեայ կայսրը օգուտ է քաղել քաղաքական դրութիւնից՝ աներևոյթ կերպով իբրև իսկական ղեկավար հանդիսանալու ժողովներում և եկեղեցին գործիք դարձնելու քաղաքական նպատակների համար։ Այդպիսով ստեղծվել է կեսարօ-պապականութիւնը, որ անտանելի լծով ծանրանում է մինչև այժմ օրթօդօքս երկիրների, մանաւանդ Ռուսաստանի վրա։ Կաթօլիկ եկեղեցին նկատել է իր պաշտօնեաներին իբրև մի առանձնեալ բարձր դասակարգ, աշխատել է, որչափ կարելի է, բաժանել նրան հասարակ ժողովրդից և ամեն տեսակ առաւելութիւններ ձեռք բերել նրա համար. մի տեսակ հոգևոր զինուորութիւն ստեղծել նրանից՝ աշխարհը նուաճելու համար, և այդպէս առաջ է եկել իսկական կղերականութիւնը՝ հոգևոր տեսքով և աշխարհական ձգտումներով։ Օրթօդօքս եկեղեցին իր պաշտօնեաներին կապել է ծէսերի ու պաշտամունքի հետ, ձգտել է նրանց եկեղեցու նուիրական ու սրբագործված առարկաների շարքում դնել՝ խնկի բուրմունքով շրջապատել և հետևանքն այն է եղել, որ օրթօդօքս ժո-

ժողովուրդը սովորել է եկեղեցում ամենայն ջերմեռանդութեամբ համբուրել հոգևորականի ձեռքն ու փէշերը, իսկ դուրսը նրան ոչ մի կարևորութիւն, ոչ մի բարոյական հեղինակութիւն չընծայել. տեղն եկած ժամանակ ցեխերի մէջ քաշ տալ, անարգել ու հայհոյել: Մեր եկեղեցին մինչև այժմ առ հասարակ հեռու է մնացել այդ երկու ծայրայեղութիւններից և ցանկալի է, որ մնայ այսուհետև: Առանձին կարևորութիւն եմ տալիս ես մանաւանդ այն խնդրին, թէ ի՞նչ պէտք է լինի ներկայումս հայ հոգևորականի դերը, որ և կաշխատեմ մի ուրիշ անգամ պարզաբանել:

Իսկ վերև առաջ բերած բացատրութիւններից այնչափը գոնէ պարզվեց, յոյս ունեմ, որ 14 միաբանների կողմից լոկ քմահաճոյք և դասակարգային շահու խնդիր չէ եղել առարկելը, թէ առաջիկայ ժողովը բոլոր եկեղեցական գործերի «կարգադրիչ և տնօրէն» լինել չէ կարող, այլ պէտք է լինի միայն «ժամանակաւոր և յանձնարարակատար» ժողով և այն անպատճառ հոգևորականների իրաւական մասնակցութեամբ: Մեր առարկութիւնը ուղղված է եղել, ի հարկէ, գլխաւորապէս նրա դէմ, որ «բոլոր եկեղեցական գործեր» շատ ընդհանուր և անորոշ խօսք է, ինչ ասես նրանց մէջ կը մտնի և նոյն իսկ «ռուսահայոց» մակդիրը ոչ մի որոշ սահման գծել չէ կարող: Վերցնենք, օրինակ, վերջերս ռուսահայերի մէջ արծարծված և իրաւամբ հրատապ համարվող մի խնդիր՝ ամուրի քահանաների նոր կին առնելու խնդիրը: Ռուսահայերի եկեղեցակա՞ն խնդիր է այդ, թէ ոչ: Թիֆլիսի արհեստաւորներն այդ նըկատմամբ դիմումներ են արել Վեհափառ Հայրապետին. ենթադրվում է ուրեմն, թէ բաւական է Նորին Վեհափառութիւնը մի կոնդակով հրամայէ, և ահա մի անգամից կարող են բազմաթիւ քահանայական հարսանիքներ տեղի ունենալ. ո՞ւր մնաց եթէ մի կենտրոնական տնօրէն ժողով այդ հարցը վճռէ: Բայց այդպէ՞ս է արդեօք: Չէ՞ որ տիեզերական ժողովներով հաստատված մի կանոն է լուծվում այստեղ. և թէպէտ հայոց եկեղեցին այդ ժողովները չէ ընդունել, բայց նրանց կանոններն ընդունել, դարերի ընթացքում պահել է և եթէ այժմ առանց այլևայլութեան մի կողմ դրվեն նրանք, ոչ միայն հայոց ընդհանուր եկեղեցուն վերաբերեալ խնդիր լուծված կը լինի, այլ և մեր եկեղեցու և ընդհանուր առաքելեան եկեղեցիների գաղափարի մէջ մի խոշոր անջրպետ կը ստեղծվի: Կարելի՞ է ուրեմն ռուսահայ պատգամաւորների ժողովը, այն էլ աշխարհականների մի ժողով, այդպիսի կանոնական խնդիր վճռել:

Տեսանք սակայն, որ նոյն իսկ դպրոցական, տնտեսական և վարչական գործերում շատ խնդիրներ կան՝ ըստ երևոյթին ռուսահայոց վերաբերեալ և դիւրութեամբ վճռելի նրանց պատգամաւորական ժողովում, բայց որ իրօք ընդհանուր եկեղեցական խնդիրներ են և միայն եկեղեցականների մասնակցութեամբ վճռվել կարող են՝ ընդհանուր ազգային-եկեղեցական ժողովում: Դպրոցը եկեղեցուց բաժանելու և դպրոցից կրօնի դասատուութիւնը հանելու խնդիրը, ճեմարանն ու թեմական դպրոցները կարգաւորելու և հոգևորականներ պատրաստելու խնդիրը՝ դպրոցական են, բայց ընդհանուր եկեղեցու շահերն են շօշափում. եկեղեցական կալուածների կառավարութիւնը աշխարհականների ձեռք տալու և այս կամ այն նպատակի համար գործադրելու խնդիրը՝ տնտեսական խնդիր է, բայց ընդհանուր եկեղեցու շահերն է շօշափում. կենտրոնական ժողովի, թեմական ժողովների իրաւասութեան խնդիրը, նոր վարչական հաստատութիւնների կազմակերպութեան խնդիրը, նրանց փոխադարձ յարաբերութեան խնդիրը՝ վարչական խնդիրներ են, բայց ընդհանուր եկեղեցու շահերն են շօշափում. բոլոր այդ խնդիրներում զուտ եկեղեցական հարցեր կան, ուստի ընդհանուր եկեղեցական-ազգային ժողովը միայն այդպիսի խնդիրներով զբաղվել կարող է. և ոչ մի եկեղեցական խնդիր չը կայ, որի մէջ եկեղեցու պաշտօնեաների մասնակցութիւնը կարևոր և արդարութեան պահանջ չը լինի: Փորձեցէք մի օտարականի, թէկուզ մի շատ ազատամիտ ռուսի, լեհացու, գերմանացու, հարցնել, թէ մենք ռուսահայերս պատգամաւորներ ենք ընտրում՝ աշխարհական պատգամաւորներ ընդհանուր սկզբունքներով և ազատ ընտրութեամբ, որ գնան ժողով կազմեն՝ եկեղեցական բոլոր գործերի կառավարութիւնն իրանց ձեռքն առնեն, եկեղեցական դպրոցներից, եկեղեցական կալուածներից, եկեղեցական վարչութեան կենտրոններից դուրս անեն հոգևորականներին, և մեր հոգևորականները եւս ապօրինի պահանջներ են անում, կամենում են իրանք էլ մասնակցութիւն ունենալ այդ ժողովի մէջ, կամենում են, որ ազատ ընտրութեան սկզբունքի հակառակ հայոց եպիսկոպոսները ձայն ունենան և հայ վարդապետները կարծիք տան այդ ժողովում,—տեսէք՝ ինչ կասեն: Ո՞ր կոյր հոգևորականն է մեր ժամանակում, որի համար ցանկալի չը լինի ժողովրդի կենդանի հետաքրքրութիւնը և մասնակցութիւնը եկեղեցական բոլոր գործերում. ցանկալի կը լինեն կենտրոնական, թեմական, վիճակային՝ ամէն տեսակ ժողովներ, ուր սրտացաւ և բարեխիղճ կերպով խնդիրներ արծարծվէին, եկեղեցական գործերի մէջ զեղծումների առաջն առնելու և կարգ ու կանոն մտցնելու համար հոգ տարվէր. հոգ տարվէր եկեղեցու և ժողովրդի իսկական կարիքների համար: Եւ միթէ հոգևորականի ու աշխարհականի, կղերական ձգտումների ու դասակարգային շահերի խնդիր կը լինէր, եթէ ամէնքս լոկ գործով միայն հետաքրքրվէինք, ճշմարիտ նախանձախնդրութեամբ մօտենայինք գործին և իրար հասկանալ կամենայինք, փոխանակ արհեստական կերպով մրցումներ ու հակառակ շահեր ստեղծելու, կոյր ոգևորութեամբ՝ հայհոյանքներով ու սպառնալիքներով իրար վրա ընկնելու: Ի՞նչ ենք բաժանում, ո՞ւմ մէջ: Ո՞վ այս դառն օրերում սիրտ պէտք է ունենայ հաշիւ ու մի արտաքին թշնամիներին թողած՝ ներքին նուաճումների ետևից ընկնելու և անտեղի պառակտումներ ստեղծելու:

Կ. Վ.

ԵՐԵՒԱՆԻ ԹՈՒՐՔ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԸ

Սրանից մի ամիս առաջ, յունիսին:

Երևանի Թուրք պատգամաւոր Աղա-խան Էրիվանսկի յունիսի 17-ին մեկնեց Պետերբուրգ մասնակցելու Դումայի աշխատանքներին:

Հետաքրքրական էին այդ առիթով տեղի ունեցած խօսակցութիւնը, որը առաջ եմ բերում փոքր ինչ ուշ:

Երևանի Թուրք հասարակութիւնը նրան ճանապարհ դնելու համար հաւաքվել էր կայարանում: Քիչ յետոյ Աղա խանը կառավարական պաշտօնեաների, քաղաքի յայտնի մարդկանց և հոգևորականութեան ուղեկցութեամբ կառքով հասաւ կայարան, որի մեծ սրահը զարդարված էր խնճոյքի համար: Կեր ու խումից յետոյ, Հասան-բէկ Աղայեվ ռուսերէն լեզուով մի ճառ արտասանեց, յոյս յայտնելով՝ որ պատգամաւորը ամէն ջանք գործ կը դնէ մահմեդականների կարևոր պահանջներին բաւականութիւն ստանալու համար: Ճառը «ուրրա»-ներով ընդունվեց: Խօսեց այնուհետև Միր-Աբբաս Միր-Բաղիրով:

«Մեր յարգելի պատգամաւոր Աղա-խան:

«Դուք սերունդէ սերունդ ազնուական տոհմից և բարձր գերդաստանի շառաւիղներից լինելով՝ մեր ազգի ամէն դասի կարիքներին ու պահանջներին ծանօթ էք. դուք ցաւել էք ազգի համար և պաշտպանել՝ նրան: Հետևաբար մենք, Երևան քաղաքի և նահանգի մահմեդականներս, բաղդաւոր ենք համարում մեզ, որ ձեզ նման մի ներկայացուցիչ ունենք, ձեզ նման մի բարձր անձի ենք ուղարկում դէպի մեր ապաւէնը, Պետական Դուման, մեր ամէն տեսակ կարիքների մասին խորհրդակցելու և նրանց լուծելու համար: Եւ յոյս ունենք, որ դուք ձեր ամբողջ ոյժով կաշխատէք մեր իրաւունքները ձեռք բերելով մեզ բաղդաւոր դարձնել:

«Ձեր բարձր ուշադրութիւնն ենք հրաւիրում հետևեալ խնդիրների վրա.

«1) Ձեր ամբողջ կարողութիւնը գործ դրէք, յանուն մահմեդականութեան, վերջ տալու այսքան ժամանակներից ի վեր տեղի ունեցող հայ-Թուրքական ընդհարումներին:

«2) Այսքան անմիտ դէպքերի գլխաւոր պատճառ հանդիսացող ագիտութեան ու խաւարի բարձման համար, քաղաքում և գիւղերում կանոնաւոր էժանագին կամ գուցէ ձրի դըպրոցներ հիմնել:

«3) Կառավարական պաշտօնեաները աւելի ուշադիր վերաբերվեն դէպի հասարակութիւնը:

«4) Պահանջէք իսկական ազատութիւն մեր կրօնի համար. պահանջէք մեր վակուֆ, մէչետապատկան կալուածները. պահանջեցէք, որ մենք իրաւունք ունենանք ընտրելու մեր շէյխ-ուլ-իսլամին, մուֆթիին, ղազիներին որոշ ժամանակով, և առհասարակ մեր հոգևոր գործերի ղեկավարութիւնը յանձնվի մեզ՝ մահմեդականներիս:

«5) Պահանջէք, որ բոլոր իրաւունքում և կառավարական շրջանակներում հաւասար աչքով նայեն մեզ վրա, նոյն աչքով, ինչ իսկական ռուսների վրա:

«6) Բարձրագոյն և այլ դպրոցներում ընդարձակվի մահմեդական կրթութիւնը:

«7) Կառավարութիւնը իր ծախսով ուսում տայ մահմեդականներին, որքան այդ պէտք է:

«8) Գիւղացիներին և գիւղատնտեսական աշխատաւորներին տալ բաւարար հող:

«9) Բաց անել ամէն գաւառում մի երկրագործական և արհեստագիտական դպրոց:

«Կեցցէք խան Էրիվանսկի! Համնէք ձեր բարձր նպատակին և մեզ բաղդաւորեցնէք»:

«Ո՜ւրրա»-ներից յետոյ, երաժշտութիւնը սկսեց նուագել գեղեցիկ կտորներ:

Կերուխումը վերսկսեց. այնուհետև խօսեց հոգևորականներից միրզա Մահմեդ Շէյխ-զադէ, որ իր ճառն սկսեց, յոյս յայտնելով՝ որ Աղա-խանը կաշխատի անկողմնակալութեամբ բոլոր ազգերի կարիքներին ուշադրութիւն դարձնելով՝ նրանց բաւարարացնել: Եւ մանաւանդ կը ջանայ հեռացնել այն ցաւալի դէպքերը, որ տեղի էին ունենում այս վերջին ժամանակներս հայրերից և պապերից բարեկամութեամբ և հարևանութեամբ ապրող հայ և մահմեդական ազգերի միջև: Ուշադրութիւն կընծայէ նոյնպէս Թուրք հոգևոր և աշխարհական կարիքներին և այլն և այլն: Շէյխը վերջացնելով ճառը աղօթքի սկսեց. ներկաները ձայնակցեցին նրան «ամէն»-ներով:

Շէյխից յետոյ խօսեց Բէյրբալայ Մահմէդ աղա Ալիեվ, յետոյ մեր յարգելի հարևան վրացիներից մի անձ արտասանեց մի ընդարձակ և գեղեցիկ ճառ: Ճառի հիմնական միտքն այն էր, որ քաղաքակրթութիւնն ու հանգըստութիւնը վրդովող այդ անմիտ ընդհարումներին վերջ տրվի: Դա պարտականութիւնն է իւրաքանչիւր անձի և մասնաւորապէս ազգի ներկայացուցիչների: Եթէ հարց տաք մի մահմեդականի, թէ ինչո՞ւ միմեանց կոտորում էք, միմեանց դէմ կռւում էք: Պատասխանում է՝— Չը գիտեմ: Նոյնը հարցնում էք հային, նա միևնոյն պատասխանն է տալիս: Յոյս ունենք, որ մեր պատգամաւորները, ուշադրութիւն դարձնելով այս կէտի վրա, որքան կարելի է շուտով առաջը կառնեն այդ աղէտի:

Մեր վրացի եղբօր ճառից յետոյ խօսք վերցրեց Աղա-խանը.

«Ժողովուրդ! դուք իմ վրա դնում էք ծանր պարտականութիւն. դուք, վստահութեամբ վերաբերվելով դէպի ինձ, ձեր կողմից պատգամաւոր էք ուղարկում ինձ Պետական Դումա: Ես ձեզ հաւատացնում եմ, որ իմ բոլոր ոյժով պիտի աշխատեմ մեր կարիքներին բաւականութիւն ստանալու և մեր իրաւունքները ձեռք բերելու համար: Վերջին ծայր ջանք պիտի գործ դնեմ, այո, այդ ուղղութեամբ: Յոյս ունեմ, որ այսուհետև մեր ժողովրդի մեծերը և հոգևորականները միանալով այս անմիտ ընդհարումների կրկնումին արգելք կը հանդիսանան, մինչև որ այստեղ և Պետական Դումայում հանգստութիւն տիրելով մեր սեփական գործերով զբաղվենք»:

Շէյխ-զադէն նորից խօսելով ասաց, որ հոգևոր դասը խոստանում է միանալ հայ հոգևորական դասի հետ և այդ ուղղութեամբ աշխատել: Յետոյ Աղա-խանի ականջին կարդաց բարի ճանապարհի աղօթքը:

Դարձեալ սկսեց երաժշտական խումբը: Ժողովուրդը ձեռքի վրա պատգամաւորին տարաւ քանի քայլ տարածութեամբ և «ուրրա-ներով» վագոն, նրա մասնաւոր տեղը: Գնացքը ժամի 1-ին ճանապարհ ընկաւ հասարակութեան «ուրրաների» մէջտեղ:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՑ

Ուսուցչական Միութեան Կենտրոնական Խորհուրդը յանձն է առնում առաջարկել ծխական դպրոցների հոգաբարձութիւններին վարժուհիներ և ուսուցիչներ: Պաշտօն ցանկացողներին խնդրվում է պատասխանել հետևեալ հարցերին.

1) Անուն, հօր անուն, ազգանուն և հասցէ:

2) Ո՞ր ուսումնարանն է աւարտել և ի՞նչ ուսուցչական արտօնութիւն ունի:

3) Թիւ և համար վկայականի:

4) Ի՞նչ պաշտօն է ցանկանում ստանձնել և որտե՞ղ:

5) Ի՞նչ առարկայ է ցանկանում աւանդել և ո՞րքան դաս շաբաթական:

6) Որտե՞ղ է եղել ուսուցիչ և ո՞րքան ժամանակ:

7) Առանձին ծանօթութիւններ. (մասնագիտութեան, լեզուագիտութեան վերաբերեալ և այլն):

Դիմել Ներսիսեան դպրոց՝ երկուշաբթի երեկոյեան ժամը 5—6½, չորեքշաբթի և ուրբաթ առաւ. 10—12:

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ

(Նամակ Խմբագրութեան)

Մի բաւական անգոյն և թթու Նամակ Ախալցխայից յունիսի 23-ից հիւրասիրվելով պատուական լրագրիդ № 139-ի մէջ, նկարագրում է տէր Սարգիս Տէր-Աբրահամեանի «հանդիսաւոր» ընդունելութիւնը հայ-կաթօլիկ ժողովրդի մի խումբ մարդկանց կողմից: Նորոգվեց մտքումս, ինչ որ կարդացել էի Պոլսի լրագիրներից մէկի մէջ (Մէջմուայը Ախպար) մի քանի տարի առաջ նոյն բովանդակութեամբ մի թղթակցութիւն, Արդանուշէն գրված: Եւ տեսնում եմ ուրախութեամբ, որ թէ հոն և թէ հոս հաւասարապէս ծծծղում է բաղդը «օրինակելի վարդապետին՝ օրինակելի ընդունելութիւններով». մանաւանդ գովելին այն է, որ այսպիսի պարագաներում, հասարակաց հրճուանքի մէջ, չէ մոռացվում հաւասարմտութեամբ պահելու համեստութեան վարդապետի պատուէրը թէ՝ մի՛ հարկանէք թմբուկ առաջի քո...: Թմբկի ձայնը անշուշտ լսված չէ, իսկ ուրախութիւնը ինքնաբերաբար սրտի զեղումն լինելով և ներքին զգացմունքների արտայայտութիւն, ոչ ոք իրաւունք չունի արգելելու Ախալցխայի նամակագրին, որ նա ևս իր առատ խունկը ծխեցնէ նոր հիւրի առաջ: Սակայն սեփական կամ փոխ առած հիացմունքով յափշտակված ժամանակ, մոռացութեան պատշաճութիւն, և որոշ նպատակով դասաւորել փաստերը կամ խեղաթիւրել, հասարակութիւնը մոլորեցնելու համար, դա մի անպատիւ ծառայութիւն է թէ սիրած անձին և թէ հասարակութեանը և այդ արուեստի մէջ բաւական շնորհք է ցոյց տալիս Նամակագիրը: Նա իր նորեկ առաջնորդը բարձրացնելու և սքանչացնելու համար դիմում է գովասանական ձևի վատ տիպարին, որ է պարսաւել հակառակորդին, լուծծանքներ համեմել նուաստացնելու [illegible] փայլը, արատաւորել ազգի իսկական գործիչների բարի անունն և համբաւն և այդ սև ստուերի յատակի վրա սպիտակ ցոլացնել փայփայած անձնաւորութեան անորոշ դէմքը: Սակայն մոռանում է, որ այծը իր ոտից են կախում և ոչխարը իր, ուզում եմ ասել, որ ամէն մարդու իր գործն է գովեստի կամ պարսաւի արժանացնում: Թէև մարդիկ սովորած են դժբաղդաբար իրանց բարոյական ծանր թերութիւնները թեթև զգալու համար խոշորացոյցով դիտել ուրիշների պակասութիւնները, սակայն անօգուտ է, զի իրանց խղճի առաջ սևերես են, եթէ միայն արթուն խիղճ ունեն, որ չէ մեռած փառասիրութեան ցաւերի մէջ: Զօրօրինակ ինչ մխիթարութիւն է երկու աչքով կոյրին, եթէ ասեն, որ դրացուդ մէկ աչքը կոյր է. ոչինչ! Այսպէս Ախալցխայի նամակագիրը, Տէր-Սարգիս Ներբողելու տենդով բռնված, բաւական չէ, որ ասում է, թէ «Հռոմի Հայկազնեան-Լևոնեան դպրոցում է աւարտած իր ուսումը», ցոյց տալու համար նրա «հայրենասիրութիւնը» և «առանց կրօնական խտրութիւնների վերաբերվելը դէպի հայ-լուսաւորչականները», փորձում է համեմատութեան դնել Հ. Գաղատոսեանի հետ և գտնում է, որ վերջինս «աւելի հակված է դէպի լատինականութեան ծէսը». ուրեմն կը հետևի որ Հռոմի Ուրբանեան դպրոցի սանը գերադաս է Վենետիկի Մխիթարեանից այն բանով միայն, որ «նա աւելի հակված չէ դէպի լատինականութիւն»: Բայց ես Հռոմում 1903 թ. տեսայ Տէր-Աբրահամեանին ճիշդ նոյն Հայկազնեան-Լևոնեան դպրոցում ոչ միայն «հակված», այլ խպառ գլորված դէպի լատինականութիւն բոլոր ունիթօրական հակումներով պատարագի արարողութեան մէջ, հակառակ նոյն իսկ հիմնադրի տուած առաքելական թղթոյն. նորմուծութիւններ, որոնք նոյն դպրոցում միւս գերապայծառները չէին գործադրում: Թողում սակայն, որ ծառն ի պտղոյ իւրմէ ճանաչի: Տիբերեան ափոնքներին բուսած ծառից, Աբիսողոմայ պէս կախված են Նիկոլա Թորոսովիչ մը, որ հազարաւորներ գլորեց բռնի կերպով լատինութեան ծոցը, մի ուրիշ տէր-Բարսեղ մը, որ պիղծ ձեռքով մեր սուրբ հայոց գրուածքները «սրբագրել» յանդգնել էր և Հռոմում փշրելով հոգին, սև տապանին վրա գրել տուած է «Թշնամի հայոց ազգին»: Միւս Անտոն Հասունեան մը, որ բացի եկեղեցական կարիքներ սարքելուց, ազգային եկեղեցու նուիրական ծիսարանները, մաշտոց, պատարագամատոյց և այլն ծայրատելով, փոփոխելով, ծամածռելով յարմարցուց «լատինականութեան ծէսին», որպէս զի հայ կաթօլիկ ժողովուրդը իսպառ պաղեցնէ և թշնամացնէ հայ լուսաւորչականաց հետ և մոռացնել տայ ազգութիւն ու Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ աստուածային պաշտամունքը: Իսկ Ադրիական ծովի ափին բարձրացած ծառի մասին խօսել և յիշեցնել Զամչեաններ, Ինճիճեաններ, Բագրատունիներ և Ալիշաններ աւելորդ է. այնքան յայտնի անուններ են, որ նոյն իսկ Ախալցխայի թղթակիցը գիտենալու է, որ այդ հողի վրա բուսած ճիւղերն որքան ալ «հակուած լինին լատինականութեան», դարձեալ իրանց հակառակորդների հասակէն աւելի բարձր են իրանց զուտ ազգասիրութեամբ և աւելի վրէժխնդիր հայրենի ծիսից անաղարտ պահպանութեան: Դարձեալ իբրև նմոյշ յարգելի վարդապետի «ազգասիրութեան» պ. թղթակիցը տալիս է մեզ մի կարմիր յայտարարութիւն: Նա իբրև ականատես և ականջալուր վկայ գրում է, որ «Յ. վարդապետը քարոզով ողջունեց ժողովրդին և հրաւիրեց, որ հայ-կաթօլիկները, իբրև մի ազգի զաւակներ, առանց կրօնական խտրութիւնների, սիրով և համերաշխութեամբ վերաբերվեն դէպի հայ-լուսաւորչականները»: Եթէ պ. թղթակցի կողմից ունենայինք հաստատ երաշխաւորութիւն, որ այս ևս մի աչքակապութիւն չէ հայ հասարակութիւնը մոլորեցնելու համար ասպարէզի վրա գլորելով նշխուն հաւկիթներ, այն ատեն մենք առաջինը ողջունում ենք Հռոմի աստուածաբան վարդապետի այդ համարձակ քայլը և բարեմաղթում ենք յարմար պարագաները ձեռքէ չը փախցնէ այդ տեսակ նպաստակայարմար քարոզներով «մխիթարել ժողովրդին», ուր հաւաքված են լինում նաև «բազմաթիւ հայեր»: Վասնզի զմեզ թշուառացնողը եղած է մինչև հիմա կրօնական խտրութիւնը յորմէ յառաջ եկեր է երկու բաժան եղբարց մէջ ատելութիւն, կռիւ, հալածանք, նզովքներ և բանադրանքներ այն ամենի համար, որ քարոզել են և ձգտել ոչ թէ առանց կրօնի խտրութեան, այլ ըստ աւետարանի ոգւոյն՝ թէ դուք ամենեքեան եղբարք էք, սէր և միութիւն պահպանել հայ-լուսաւորչականների հետ: Եթէ «Հռոմի դպրոցից դուրս եկած» ամէն վարդապետ այդ ազատ համարձակ քայլերով դիմած լինէր դէպի Գալիլիացու մարդասիրութեան լուսաւոր վարդապետութիւնը, այն ատեն միջնադարեան ուրուականը անաստուած կերպով չէր հալածէր տողերիս գրողը, որ յանդգնութիւն ունեցել էր պատռել անցնել Նախապաշարմանց ցանկապատն և, 1890 թ. գնալով էջմիածին, ներկայ գտնուել էր սրբալոյս Միւռոնի օրհնութեան ազգային յատուկ հնաւանդ և պատկառելի հանդիսին, եկեղեցումը ծածկելով իւր վանական սև փիլոնը: Այդ նոյն վանական փիլոնով Հռոմում, ընդ մէջ 1885—1888 ամաց, երեք չորս անգամ ներկայ գտնուել էի Կապելլա Սեքստինայի մէջ ս. Պապի պատարագին: Սակայն այդ սև փիլոնը ցուլը գէշ իբրև կարմիր շոր փաթթեցին եպիսկոպոսները որպէս հակակաթօլիկական մի յանցանք և տասն ու չորս տարի յետոյ—իբրև Թազա Նուպար—ծամել ու գրել էին նաև Սարաթօվի եպիսկոպոս բարոն Ռօսպըլի բերան, երբ նա 1903 թ. «հովուական այցելութիւնը» կատարում էր Կովկասում:

Այս միջադէպն իմանալէն զկնի, թող շնորհունեակ թղթակիցն իր գովասանական նամակի բովանդակութիւնը ուղարկէ Սարաթօվի Կեսլեր եպիսկոպոսին, այն ատեն դերերը գլխի վայր կը փոխուին, և լուսափայլ Սարգիս վարդապետն ալ մեզի պէս կը սևանայ, կը լինի կասկածելի, անվստահելի, անբարեյոյս, ոչ ճշմարիտ կաթօլիկ, նուազ լատինասէր, աւելի ազգասէր, ըմբոստ լատին մեծաւորաց հոգեշահ հրամանաց դէմ: Յետ այնորիկ կը յաջորդեն չարամիտ և ստայօդ ամբաստանութիւնք, անձնական կամ կաստայական թշնամութենէ թելադրված անլուր զրպարտութիւններ. նշաւակ կը կանգնի բոլոր լատին հոգևորականութեան թունաւոր նետերին և... և կը թռչի գլխից եպիսկոպոսական խոյրն և կը կործանի այն գահաւորակն, որոյ վրա ցանկանում են նստեցնել տէր-Սարգսին՝ Ախալցխայի «զգօնի, հաւասար» քուէարկութեամբ ընտրած չորս հոգաբարձուները իրենց երկու անձնափոխանորդներով, երբ «Թոյլատրութիւն ստացվի Պետերբուրգից»:

Թղթակցի տուած միւս տեղեկութիւնները «Թեկնածութեան և Կեսլեր եպիսկոպոսի հայսնը հետ թղթակցելուն, Կալլոռնիոսս փիլիսոփայէն առած է անշուշտ. և այդ նիւթի վրա մեզ թէ ի հարկ կը լինի վերադառնալու, ուստի այստեղ բաց թողնելով, նրանց մասին խօսելու, կանգ կառնեմ «Թիֆլիսի Նահապետեան վարդապետի կուսակցութեան» մասին երկու խօսք ասել, հարկից ստիպված: Խնդրեմ լսէք վերջի մեղեդին»: In cauda veneunm, պոչի ծայրումն է թոյնը: «Իսկ միւս կողմից, ինչպէս լսեցինք (?), սրա (տէր Սարգսի) առաջնորդ ընդունելու դէմ է հայ կաթօլիկների մի մասը, մանաւանդ Թիֆլիսի Նահապետեան կուսակցութիւնը»: Ուրեմն բանից դուրս է գալիս, որ Սարգիս վարդապետին Ախալցխայի, մօտ 10—15 կառքերով ընդառաջ գնացող մի քանի ջոլխտ և կենտ հայ կաթօլիկները կազմում են, ոչ աւելի և ոչ պակաս քան «հայ կաթօլիկների մի մասը»: Երանի՜ ազգասէր հոգւոյն: Իսկ Թիֆլիսի Նահապետեան վարդ. կուսակցութիւնը. այստեղ թղթակիցն իրան զգում է արդէն ամբոխեան օշարակներու ազդեցութեան հոգեզմայլմունքներով հասած իր հպարտութեան զենիթին: Նա տեսնում է իր առաջ կանգնած մի ուժեղ կուսակցութիւն, որ ցցի վրա հանում է «ձեռնադրվելիք եպիսկոպոսի» գափինները: Բայց երբ գլուխը շշմեցնող գոլորշիները ցնդեն, այն ատեն կանհետանայ զինքը հեղձամղձուկ անող եղջերուաքաղց և պայծառ աչքերով պիտի տեսնէ, որ «Նահապետեան վարդապետի կուսակցութիւնը» գոյութիւն չունի և չէ էլ կարող ունենալ: Այլ կայ հայ կաթօլիկ ժողովուրդ, որի սրտի, մտքի և բղձից թարգման եղեր է, եթէ ներելի է ասել, Նահապետեան վարդապետը: Կովկասու հայ-կաթօլիկ համայնքը բնաւ կարիք չէ զգացել կուսակցութեան բաժանվելու: Կար յիրաւի երբեմն մեր և Արդուինի թեմի կաթ. հասարակութեան միջև բաժանումն մինչև 1903 թ, բայց ի պատիւ Բաթումի հոգաբարձութեան խորհրդի անդամներին՝ այդ բաժանումն ալ վերացաւ, և մեր նախաձեռնութեամբ նոյն ամի փետրվարի վերջին Թիֆլիս գալով Ախալցխայից, Բաթումից, Կարսից և Ալէքսանդրոպոլից պատգամաւորներ, տեղի ունեցաւ ցանկալի միութիւնը: Այդ ժամանակից ի վեր Կովկասի հայ կաթօլիկ հոգևորականութիւնն և ժողովուրդը, միշտ հաւատով և վստահութեամբ վերաբերվել են դէպի մեր անկեղծ և անշահասէր գործունէութիւնը, և զարգացած երիտասարդութիւնը, գիտակցօրէն իր ազգային իրաւանց և ինքնավարութեան, համամիտ և համաշունչ գործել են մեզ հետ մինչև ցայսօր: Մենք երբեք մի չարաբաստիկ օր միտք չենք ունեցել յղանալու լինել Կովկասի հայ-կաթօլիկների հոգևոր կառավարիչ*) («Մշակ» № 136): Ուստի և ոչ Նահապետեան կուսակցութեան ծնունդը կրնար տեղի ունենալ: Միթէ ինձ համար աւելի պատուաբեր էր թողուլ, լքանել, մերժել և զրժել ազգի ամբողջութեան և գնալ յենուլ միջնադարեան մութ ուժերի վրա և նոցա օգնութեամբ չղթայել մեր բնիկ ազգային եկեղեցու և ժողովրդի սրբազան իրաւունքները... Այդ բանը այնքան հեռու է իմ մտքից և սրտից, որչափ հեռու է արևելք արևմուտքից:

Առանձին մի խօսք ալ պ. Նամակագրին. բարեկամաբար խորհուրդ տալիս ենք իրան չը պատկանեալ գործի մէջ չը միջամտել անհեթեթ մտքերով և միամտօրէն գործիք չը դառնալ ճարպիկ և խորամանկ շահագործողների ձեռքում:

Հ. Գ. Ն.

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յուլիսի 22-ին

Մի քանի քահանաների նախաձեռնութեամբ պատրաստվել է մի ընդարձակ գրութիւն, բաւական յանդուգն իր բովանդակութեամբ, ուղարկելու Վեհ. Կաթողիկոսին, որով խնդրում են յետաձգել կենտրոնական ժողովի գումարումը և պահանջում են վեց թեմական առաջնորդների հետ միասին քահանայական դասից 12 ներկայացուցիչ ունենալ կենտրոնական ժողովում:

Այդ դիմումին կան և հակառակորդներ, որոնք կարելի և անհրաժեշտ են համարում դիմել իրանց պահանջներով և ցանկութիւններով միմիայն կենտրոնական Ժողովին: Այս խնդիրը հաւանօրէն կը լուծվի երկուշաբթի օրվայ հերթական ընդհանուր ժողովում:

Պէտք է յուսալ, որ ողջմտութիւնը կը յաղթանակէ այդ ժողովում և քահանայական դասը պատմական մեծ և անուղղելի սխալ չի գործի:

Յ.

Գանձակ, 21 յուլիսի

«Մշակ»-ի 154-երորդ համարում, վերջին տեղեկութիւնների բաժնում, Գանձակից հաղորդված լուրի մէջ մի խոշոր տպագրական սխալ է մտել, որը խնդրում եմ անմիջապէս ուղղել: «Նալ-Թօքան» կոչվող վայրում ոչ թէ սպանվել են երկու հայ գեղջուկ այլ երկու թուրք գեղջուկ..., որի համար Բանանցը տուգանք ենթարկեցին՝ 810 րուբլի, իսկ Միրզիկը՝ 140 րուբլի—գումարն 450 ր. յօգուտ սպանված թուրքերի ընտանիքի:

Յարգանօք Ալ. Սահակեան

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐ

Աղդամ, 22 յուլիսի

Հեռագրաթելը դեռ չէ կապված:

Այստեղ լուրեր են ստացվել, որ ամբողջ գիշեր Շուշում տեղի է ունեցել հրացանաձգութիւն:

Շուշու թուրքերի և հայերի մէջ դեռ հաշտութիւն չէ կայացել: Այսօրվայ համար նշանակված է եղել երկու կողմերի ներկայացուցիչների ժողով հաշտութիւն կայացնելու համար:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսից յուլիսի 15-ին հաղորդում են «Рѣчь» լրագրին, որ կարգադրութիւն է արված գրաւել թղթակիցների ուղարկած բոլոր այն հեռագիրները, որոնք վերաբերում են կովկասեան յուզմունքներին: Գեներալ Շիրինկինը միջոցներ է ձեռք առել, որպէս զի բարձր ադմինիստրացիայի համար աննպաստ տեղեկութիւններ չը հաղորդվեն:

Այն անձինք, որոնք կամենում են ծանօթանալ կաթնատնտեսութեան արհեստի հետ, կարող են օգտվել այն ժամանակաւոր դասընթացքից, որ բացված է Կարսի գաւառի Պետրոպավլովկա գիւղում: Այդպիսի մի ժամանակաւոր դպրոց անցեալ տարի գոյութիւն ունէր Ալէքսանդրապօլի գաւառում և եղաւ արդիւնաբեր: Դասընթացքը գործնական բնաւորութիւն է կրում: Աշակերտները գործնականապէս պարապվում են իւղագործութեան արհեստով: Ցանկացողները պէտք է ճանապարհվեն դէպի Բաշ-Կադիքլար երկաթուղային կայարանը, որտեղից երեք վերստի վրա է Պետրոպավլովկա գիւղը: Այնտեղ պէտք է դիմել ինստրուկտոր Սողոմոնեանցին: Ուսումը ձրի է և կը շարունակվի մի ամիս:

Գործադուլներների մի խումբ, որոնց բիւրօն մերժել է հասարակական գործ տալ՝ քաղաքի բնակիչներին ցուցակագրելու, դիմեց Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատարին մի յայտարարութիւնով, որի վրա 30 հոգու ստորագրութիւններ կան, որով նրանք մեղադրում են գործադուլների բիւրօյին կողմնապահութեան և անարդարութեան մէջ և բերում են մի շարք այնպիսի անձերի ազգանուններ, որոնք ապահովված են, բայց ընդունված են գործադուլների տեղ: Այդ յայտարարութեան մէջ, ի միջի այլոց, մատնացոյց է արված մի տիկ. Կ.-ի վրա, որը գործում է գործադուլների շարքում, չը նայելով, որ նա ունի սեփական տուն և այլն:

Տեղական ծխախոտի գործարանների բանւորները, որոնց գործադուլի պատճառով գործարանները ժամանակաւորապէս փակված են, դիմեցին քաղաքային վարչութեանը, խնդրելով միջնորդել գործադուլ անողների և գործարանատէրերի միջև վէճը լուծելու:

Ստացանք Յ. Դաղբաշեանի ռուսերէն-հայերէն բառարանի վերջին պրակը: Ընդամէնը բառարանը ունի 1221 երես, իւրաքանչիւրը բաժանված երկու սիւնակի: Բառարանը պարունակում է մօտաւորապէս 90,000 բառ: Բաժանորդագրութիւնը համարվում է վերջացած: Ամբողջ բառարանը առանց ճանապարհածախսի արժէ 8 րուբլի, ճանապարհածախսով 9 րուբլի: Բառարան յօրինողը խոստանում է վերջաւորում հրատարակել նաև յաւելուած այն բառերի, որոնք որ և է պատճառով մուտք չեն գործել բառարանի մէջ: Բառարանի հրատարակութիւնը տևեց մօտ չորս տարի:

Ստացանք Դ. Աղայեանի «Մայրենի լեզու»-ի չորրորդ գիրքը՝ պատկերազարդ, առաջին տպագրութիւն, 316 երես., գինն է 90 կոպէկ:

Պետական Դումայում եղող Կովկասի պատգամաւորներից առայժմ վերադարձել է միայն մէկը՝ Կարսի շրջանից իշխ. Աջարսկին:

Տիկին Վարդուհի Շահ-Պարոնեանը խընդրում է մեզ տպագրել, որ մարտի 23-ին, Թիֆլիսի ժողովարանում, յօգուտ Գանձակի հայ աղէտեալների արված երեկոյթից մնացած զուտ արդիւնքը 1685 ր. 66 կոպ. գործադրվել է հետևեալ կերպով: Մի վագոն ալիւր 700 պուդ ճանապարհածախսով 894 ր. 31 կ.: Փոխադրված է հեռագրով Զատկի տօներին բաժանելու համար 400 ր. կանխիկ դրամ: Այդ դրամի փոխադրելու ծախս 2 ր. 15 կոպ.: Թիֆլիսում բաժանված է երկու խեղճ գանձակցի ընտանիքներին 23 ր., 355 ր. 20 կ. ուղարկված է պ. Յովսէփ Մելիք-Բէգլարեանի անունով ի պէտս Գանձակի հայոց գրագիտական ուսումնարանի, որ հիմնված է սպանվածների և զրկվածների երեխաների համար: 11 րուբլի մնում է ապառիկ մի քանի անձնաւորութիւնների վրա: Ընդամէնը 1685 ր. 66 կ.:

Ընտրութիւնները քաղաքային դումայի ձայնաւորների, որոնց լիազօրութեան ժամանակամիջոցը լրանում է նոյեմբերին, նախապէս որոշված է կատարել առանձին քաղաքամասերում և ոչ թէ մի ընդհանուր ընտրողական ժողովում:

Այս տարի Թիֆլիսի այգեգործական դպրոցըն աւարտեցին 10 հոգի, որոնցից 2 հայ, 6 վրացի, 1 թուրք և 1 ռուս. հայերն են՝ Արամեանց Նիկողայոս՝ Շուլու գաւառից և Գոլանճեան Յարութիւն՝ Թիւրքիայից:

«Մշակ»-ի № 150-ի մէջ Սուրմալուից Պետական Դումային ուղարկված հեռագրի մէջ սպրդել է հետևեալ սխալը. Թարգմանված է. «ոչ մի միջոց չէ խնայվել կանգնեցնելու Թուրքերի գործած գազանութիւնները հայերի վրա»: Պէտք է լինի՝ «ոչ մի միջոց չէ դադարեցնում Թուրքերի գազանային վարմունքը հայերի վրա»:

Թիֆլիսի ժամանակաւոր գեն.-նահանգապետը նորից թոյլատրեց մահմեդական դասարաններին մորթելու մանր անասուններ սպանդանոցից դուրս, 6-րդ քաղաքամասում: (Кавк.)

Դիդուբէում, գիշերվայ մօտ ժամը 1-ին, հերթապահ գորոդովոյը գտել է գետնի վրա ընկած, փորից, գլխից և 2 ձեռքից վիրաւորված Արտեմ Կարապետեանին. վերջինս պատմեց, որ նրան վիրաւորեց ալէքսանդրոպոլցի Հայկ Գրիգորեանցը՝ կողոպտելու նպատակով, խլելով Կարապետեանից հարիւր րուբլի: Ոստիկանութիւնը ձերբակալել է Գրիգորեանցին: Վիրաւորվածը ուղարկված է Միքայէլեան հիւանդանոցը. նրա կեանքը վտանգի մէջ է:

«Մուշա» լրագիրը լսել է, որ Կիցխիլայում (Սղնախի գաւ.) սպանված է Ջուղաանի գիւղի հասարակութեան տանուտէր Գիգօ Ալազաշվիլին, որը մեղադրվում էր լրտեսութեան մէջ:

Գանձակից «Т. Л.» լրագրին հեռագրում են. «Երէկ Գանձակ կայարանի թուրք բանւորները գործադուլ արին: Լրագիրների տեղեկութիւնը՝ Շուշում Դաւիթ Մելիք-Բեգլարեանին վիրաւորելու մասին՝ հիմքից զուրկ է»:

Քութայիսի նահանգից յուլիսի 29-ին ադմինիստրատիւ կարգով 25 հոգի ուղարկվում են Տօբոլսկի նահանգը:

«Շրոմա» լրագրին հաղորդում են, որ արդէն 3 օր է, ինչ Քութայիս քաղաքի զանազան մասերում ամէն գիշեր տներ են այրվում:

Վլադիկավկազի երկաթուղու վարչութիւնը խնդրամատոյց է եղել թոյլ տալ իրան երկաթուղային ուսուցիչների համաժողով գումարել՝ մշակելու համար երկաթուղային լուսաւորական գործունէութեան ընդհանուր ծրագիր:

(«Т. Л.»)

Գանձակից մեզ հաղորդում են, որ մօտ օրերս անյայտ չարագործներ մտել են Գանձակի բնակիչ Իսրաֆիլ Միրզա-Ալի-օղլու բնակարանը, ծանր կերպով վիրաւորել նրան, յափշտակել նրա կնոջ ոսկու բոլոր զարդարանքները 440 րուբլու արժողութեամբ և անյայտացել:

Աղէտեալների օգտին ստացանք. 1). Բաթումից—Գ Գրիգորեանցի միջոցով ժողոված այնտեղ՝ գտնված հայ զինուորներից 8 ր. 40 կոպ., 2). Բագուից—«Московско-Кавказское» ընկերութեան գործակատարներից և բանւորներից՝ Միքայէլ Լալաբէգեանի միջոցով՝ 90 ր.:

«Рус. Сл.» լրագրին հեռագրում են Սոֆիայից, որ բուլղարական սօցիալիստները ռուսաց գրող Կուլեարկօ-Կորեցկու մասնակցութեամբ ժողով են գումարել, որտեղ իրանց համակրութիւնն են յայտնել ռուսաց ազատագրական շարժման: Ռուսաստանի պաշտօնական ներկայացուցիչը Բուլղարիայում այդ առիթով գրաւոր բողոք է յայտնել բուլղարական կառավարութեանը և հարցրել, թէ ինչ միջոցներ են ձեռք առնվել այդպիսի ժողովներին վերջ տալու համար: Բուլղարական կառավարութիւնը յայտնել է, որ նա ժողովների դէմ ոչ մի միջոց ձեռք չի առնի, որովհետև ժողովների ազատութիւնը երաշխաւորված է բուլղարական սահմանադրութեամբ:

Ռեզանից հեռագրում են «Рус. Сл.» լրագրին. «Պետական բանկի բաժանմունքը, առանց իր կենտրոնական վարչութեան համաձայնութեան, հրաժարվեց ընդունել 191,000 րուբլու արժողութեամբ պետական ռենտան, որ ներկայացրել էր նահանգական զեմստվային վարչութիւնն՝ ընթացիկ ծախքերի համար համապատասխան գումարը ստանալու:

Յուլիսի 15-ին, առաւօտեան, Պետերբուրգի քաղաքապետը արտակարգ հրահանգ է ուղարկել ոստիկանութեան պաշտօնեաներին: Այդ հրահանգի մէջ նա առաջարկում է ձեռք առնել բացառիկ միջոցներ մայրաքաղաքի տպարաններին վրա հսկողութիւն ունենալու համար, որովհետև ենթադրութիւն կայ, որ կարող են բռնի կերպով նրանցից մէկն ու մէկը գրաւել «արգելված դօկումենտը»՝ այսինքն Դումայի դիմումը ժողովրդին՝ տպագրելու համար: Նոյն հրահանգում ասված է, որ կարող է պատահել՝ փորձեր անեն չը թոյլատրված կոչեր ցրելու ու տարածելու և այդ բանում կը մասնակցեն ինտելլիգենտ մարդիկ: Նրանց թւում կարող են լինել զինւորականներ գեներալի աստիճանով, ստատսկի և գաղտնի խորհրդականներ: Քաղաքապետը առաջարկում է կալանաւորել անխտիր բոլորին, առանց ուշք դարձնելու նրանց դիրքի վրա: («Р. В.»)

---

*) Այս մասին յետոյ առիթ կը լինի խօսելու:

—

Երկրագործութեան գլխաւոր վարչութեան մէջ այն համոզմունքն է տիրում, որ Ստոլիպինսկու գիւղացիների հողային ծրագիրը արմատական փոփոխութիւնների կենթարկվի, և նոյն իսկ հաւանական է, որ նրան չընդունեն, իսկ նրա փոխարէն քննեն Կուտլերի կազմած նախագիծը: Այս վերջին նախագծի հարցը սերտ կապ ունի նրան երկրագործութեան մինիստր նշանակելու հետ, որովհետև նա այդ պայմանով միայն կը համաձայնի ընդունել առաջարկված մինիստրական պաշտօնը: («Нов. Вр.»)

—

Ինչպէս հաղորդում է «XX Вѣкъ» լրագիրը, Սամարինը մերժել է իրան առաջարկված սինոդի օբէր-պրօկուրօրի պաշտօնը ստանձնել: Թեկնածու են համարում յիշեալ պաշտօնի համար նախկին օբէր-պրօկուրօր իշխ. Օբօլենսկուն:

—

Պետական Դումայի անդամ Ալադինը մասնաւոր խօսակցութեան ժամանակ յայտնել է «Berliner Tageblatt» լրագրի թղթակցին, որ առաջիկայ նոյեմբերին Ռուսաստանում կը լինի ընդհանուր յեղափոխութիւն, որին կը մասնակցի նաև զօրքը և նաւատորմիղը: Դումայի անդամներից շատերը այսուհետև կը գործեն իբրև յեղափոխական կոմիտէի անդամներ մինչև այն ժամանակ, երբ Ռուսաստանում կը հաստատվի հասարակապետութիւնը:

—

«Отг.» լրագրին հաղորդում են Պետերբուրգից, որ Գանձակի նախկին գեն.-նահանգապետ Վ. Ս. Տակայշվիլին կարճ ժամանակամիջոցում հրատարակելու է մի գիրք՝ «Գանձակի նահանգի դէպքերի մասին, սկսած օգոստոսի 15-ից մինչև նոյեմբերի 20-ը 1905 թ.»: Ինչպէս լսվում է, գիրքը պարունակում է իր մէջ շատ հետաքրքիր նիւթ և տալիս է Կովկասի դէպքերին նոր լուսաբանութիւն:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

21 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յուլիսի: (Պաշտօնական): Արդարադատութեան մինիստրի ցիրկուլեարը պ. պ. աւագ-նախագահներին և նահանգական դատարանի պրօկուրօրներին:—«Ռուսաստանի անցրած այս ծանր տարիներում, փորձանքների ու խռովութիւնների տարիներում, դատաստանական վարչութեանը բաժին է ընկել վերին աստիճանի պատասխանատու և դառն խնդիր—պաշտպանել օրէնքի ոյժով պետական և հասարակական կարևորագոյն շահերը: Սաստիկ աճող յանցանքը, որ արտայայտվում է ոչ միայն պաշտօնական անձերի և մասնաւոր մարդկանց դէմ կատարած եղակի տեռրօրիստական քայլերը, այլև խմբական անկարգութիւնները, որոնք երբեմն բռնում են ամբողջ շրջաններ և զինված ապստամբութեան ձև են ստանում, քննիչ և դատաստանական իշխանութիւնից պահանջում է ոյժերի մեծ լարումն՝ արդարադատութեան էական խնդիրները իրագործելու համար: Այս խնդիրների սաստիկ դժուարութիւնը բարդացաւ նրանով, որ անկարգութիւնները ծագում էին և տարածվում բերանացի պրօպագանդայի կամ թէ մամուլի միջոցով, և սակայն մտքի և խօսքի այդ անսահման շրջանում պահանջվում էր սաստիկ մտացածին որոշումն սահմանների, որտեղ վերջանում է դատողութեանց իրաւական ազատութիւնը, և սկսվում է յանցաւոր ոտնձգութիւններ պետական և հասարակական կազմի հիմունքների դէմ: Ներկայումս, երբ պետական խաղաղ կեանքի թշնամիները ամեն միջոց գործ են դնում յուզմունքը երկարացնելու և դասակարգային թշնամութիւն ու ատելութիւն զարթեցնելու դէպի կառավարութիւնը, Թագաւոր Կայսրը՝ իր լիովին հաւատով դէպի դատարանը, բարեհաճում է առանձին աչալրջութեան հրաւիրել դատաստանական վարչութեանը՝ օրէնքի ոյժը պահպանելու և անսասան տոկունութեամբ պաշտպանել պետական կարգը և ապահովել հասարակական անդորրութիւնը, արագ կերպով ազդելով մեր հայրենիքի թշնամիների վրա: Այսպէս, միապետի կամքը յայտնում եմ պ.պ. նախագահներին ու պրօկուրօրներին կատարելու համար, լիովին հաւատացած լինելով, որ դատաստանական վարչութիւնը առաջիկայումն էլ ոչ մի հանգամանքներում չի մոռանայ իր վրա ընկած բարոյական և պաշտօնական պարտականութիւնը գահի, հայրենիքի և օրէնքի առաջ, և միշտ բարձր կը կանգնի հասարակական շարժումների, տրամադրութիւնների և կուսակցական պայքարների փոփոխվող տատանումներից»:

Նորին Կայսերական Բարձրութեանը՝ կառավարչապետի ուղղած հեռագիրը Րէվէլից.—«Յայտնում եմ Ձեր Կայսերական Բարձրութեանը, որ «Память Азова» նաւի հաւատարիմ մնացած զինւորների մի մասը, գալով Րէվէլի նաւահանգիստը, ինքը ուժով գործ ունեցաւ ապստամբների հետ, և խնդրեց հետևակ ուղարկել ապստամբների դէմ, թւով մօտ 150 մարդ: Ապստամբները տարվում են բանտերը: Նաւերը զինաթափ կանվի: «Память Азова» կրէյսէրից եկան սպաները, որոնք ամբողջ ժամանակ կալանաւորված էին: Մի ագիտատոր բռնված է: Գեներալ Պօլզիկով»: Կրօնշտադում սպաներին սպանելու համար 7 հոգի զինւորական դատարանի վճռով գնդակահարվեցին: Սվէաբօրգում ապստամբութիւնը կատարելապէս ճնշված է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Լրագրական հաղորդագրութիւնները, թէ մինիստրների խորհրդի կազմը ուժեղացնելու է՝ անդամներին նշանակելով կազմի մէջ և խորհուրդը հրաւիրելու հասարակական գործիչներին՝ անհիմն են:—Հէյդէնշտէյնի մարմինը Տէրրիօկից տեղափոխելը Նիկոլաևսկի վօկզալ նշանակված է յուլիսի 22-ին: Գիշերվայ ժամի 1-ին միա- [illegible] Պետերբուրգի հակառակ ծայրերին: Հրդեհը իր առասպելական ուժով նշանաւոր էր փայտի և կէկսի պահեստներում, Սմիրնովի էլէկտրական կայարանում, Պլատոնովի ատաղձագործական փաբրիկային կից Վասիլևի կղզում: Մարդկային զոհեր չը կան: Հրդեհի պատճառը և վնասների քանակը որոշված չեն: Երկրորդ հրդեհը սկսվեց Լէյխտէնբէրգսկի փողոցում: Վառված է հնոտիքների գործարանը. Պետերբուրգից մինչև Վիբօրգ կայարանը և Վիբօրգից սկսած ծովափը Կրօնշտադի ուղղութեամբ բռնված են զօրքերով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յուլիսի: Կրօնշտադում զինւորական դրութեան փոխարէն յայտարարված է պաշարողական դրութիւն:

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ, 21 յուլիսի: Կարմիր գվարդիայի և բնակչութեան պաշտպանողական խմբի ու ոստիկանութեան ընդհարման ժամանակ եղան սպանվածներ և վիրաւորվածներ: Կարգը վերականգնված է: Կարմիր գվարդիայի գլխաւոր Կօկը ձերբակալված է:

ՄՕՍԿՎԱ, 21 յուլիսի: Քաղաքապետին հրամայված է Պետերբուրգից՝ քննել, թէ ինչու Պետական Դումայի նախկին անդամ Իօլլօսը հեռագրել է Պետերբուրգ Հէրցէնշտէյնի սպանութեան մասին՝ սպանութիւնից առաջ: Քննութիւնը ցոյց է տուել, որ ժամի 7-ին սպանութեան մասին տպված էր «Маякъ» լրագրում և խմբագիր պրիվատ-դօցէնտ Գրէնը ցոյց է տուել այն մարդուն, որը իրան հաղորդել է սպանութեան լուրը: Քաղաքապետը միջոցներ ձեռք առեց այդ անձին գտնելու:—Տպարանական գործի բանուորներ Մօսկվայի միութիւնը ուղարկեց բոլոր այն քաղաքները, որտեղ կան տպարանական բանուորների կազմակերպութիւններ, առաջիկայ համառուսական համագումարի հարցերի ծրագիրը:

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ, 21 յուլիսի: Քաղաքում դրութիւնը լուրջ է: Կարմիր գվարդիայի առաջացրած յուզմունքը բանուորների մէջ չէ ջնջվել: Նոր վտանգաւոր դէպքեր չեն երևում: Ամրոցը կօմէնդանտի ձեռքումն է: Կարգը վերականգնած է և ֆօրտերում: Յուլիսի 18-ին ամրոցում սպանված է պօլիցմէյստեր Նօտարը: Ըստ պատմածների, զոհերի թիւը 100 է: Նաւահանգստում կանգնած են «Ցեսարևիչ», «Բօգատիր», «Սլաւա», և ականանաւեր: Ադմինիստրացիան, պօլիցիան, երկաթուղային և հասարակական ծառայողները գործում են կանոնաւոր կերպով: Դատաստանական վարչութիւնները սկսեցին քննութիւն Սվէաբօրգի ապստամբութեան երկաթուղու և հեռագրի փչացնելու մասին: Սենատը ցիրկուլեարով դիմեց նահանգապետներին, հրամայելով, որ անհրաժեշտ է պօլիցիական րէզէրվներ կազմակերպել: Առաւօտեան ոստիկանատուն մտան մի քանի երիտասարդներ, որոնք առաջարկեցին աջակցել կարգը վերականգնելու: Կազմվեց դրուժինա, «Սպիտակ Գվարդիա» անունով, որ պօլիցիայի ղեկավարութեամբ դիմադրէ գործադուլին: Կարմիր գվարդիականները պահանջեցին տրամվայի դադարեցումը, բայց էլէկտրաքարշը բռնում էր սպիտակ գվարդիականների պաշտպանութեան ներքոյ: Դարանամուտից կարմիր գվարդիան կրակ բացեց: Սպիտակ գվարդիականները պատասխանեցին: Կան սպանված և վիրաւորվածներ: Կանչվեցին զօրքեր: Կարմիր գվարդիան նահանջեց: Ուրիշ ընդհարում տեղի ունեցաւ կայարանի մօտ: Այժմ կարգը վերականգնվեց փողոցներում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յուլիսի: Յուլիսի 20-ին բացվեց Դվօրեանսկի փողոցում «ռուս ժողովրդի միութեան» թէյարանը, որը հենց նոյն օրը քարուքանդ արվեց բանուորների ձեռքով:—Գլխաւոր զինւորական դատարանը անհետևանք թողեց զինւորական պրօկուրօրի բողոքը Տամբօվում զինւորական-շրջանային դատարանի վճռի դէմ, անյայտ գործի վերաբերմամբ, որ պրիստաւ Ժդանովին սպանելու համար դատապարտված է տասն ամեայ տաժանակրութեան: Զինւորական դատարանը անհետևանք թողեց Խարկովի գիմնազիստների աշակերտների և այլոց վճռաբեկ գանգատը որոնք դատապարտված են տասնամեայ տաժանակրութեան Վօլժսկօ-Կամսկի բանկի վրա զինված յարձակվելու համար: Գիշերը խուզարկվեց ուսանող Մավրինի տունը, որը ձերբակալվեց փողոցում: Մավրինը ծանր վիրաւորեց օկօլօդօչնուն և սպանեց շուկայի պահապանին և ինքնասպան եղաւ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յուլիսի: Ֆինանսների մինիստրի տուած կարգադրութեամբ կառավարիչ սենատին, 1906 թւի օգոստոսի 1-ից կը պակասեցնվի 10-ից 5 կօպէկ յօգուտ Կարմիր-Խաչի, որ առնվում է երկաթուղով ճանապարհորդող ամեն մի պասսաժիրից:

ՎԱՐՇԱՎԱ, 21 յուլիսի: Բացի գեներալ Մարկգրաֆսկուց պատահմամբ սպանված է և նրա վեցամեայ որդին: Գեներալը ապրում էր Օտվօցկի ամարանոցում: Երէկ Վարշավայից գալով այնտեղ, ցերեկվայ ժամը 3-ին, նա սեփական կառքով կնոջ, որդու և աղջկայ հետ մեկնեց ամարանոց: Ճանապարհին երկու կողմից 10 մարդ խաչաձև կրակ բացին կառքի վրա, սպանելով գեներալին և որդուն, և թեթև վիրաւորելով կառապանին:

ՌՕՍՏՕՎ-ԴՕՆԻ ՎՐԱ, 21 յուլիսի: Գործադուլ արին շոգենաւերի կօմանդաները: Առաջադրված են տնտեսական պահանջներ: Նաւահանգստում նաւակների կօմանդաների գործադուլը շարունակվում է: Մի քանի ֆիրմաներ սկսեցին բանուորների հետ հաշիւը մաքրել:

ԽԱՐԿՕՎ, 21 յուլիսի: Ապրանքի վագօնից գողացված է երկու արկղ դինամիտ, ամեն մէկը մօտ երկու պուդ:

ՐԻԳԱ, 21 յուլիսի: Ցերեկը քաղաքի կենտրոնում, Զեմսկի փողոցի վրա նոր կառուցած տան մէջ կազմվեց միտինգ 500 բանուորներից: Վրա հասած իշխանութիւնները շրջապատեցին տունը և հաւաքվածներին բռնեցին:

ԵԱԼՏԱ, 21 յուլիսի: Պուշկինսկի բուլվարում նստարանի վրա նստած երկու մարդ վայր գցեցին ռումբ: Պայթիւնով կտոր-կտոր են եղել նրանք. տեղը շրջապատվեց զօրքերով:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից.

ԱՌԱՒՕՏԵԱՆԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՔԻՒՉՈՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն:
Ձ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Կ. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՍԱՐԱՋԵՇԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—3 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒԼԻՆՈՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.:
Խ. Գ. ԱՐԵՆԵԱՆՑ—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Հիւանդանոցի (կօնսիլիումներ) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով:
Ելիզավէտինսկայա փողոց, 101, տէլէֆօն 1026
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր:

Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—միզասեռական, կաշւի և սիֆիլիս:
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին և էլէկտրօ-բուժութիւն:
Գ. Ն. ԴԷՄԻԴՈՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Գ. Հ. ԹԱԴԵՒՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ
Մ. Գ. ԿԻՄՕՆՑ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՋԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի:
Գ. Ա. ԲԷՅԷՐ—երեխայոց և ներքին հ.

Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում միկրօսկօպիական, բակտէրիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ստնտուների (кормилица) ընտրողութիւն: Բժշկական խորհրդի համար վճարը 50 կօպ.: Օպէրացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան: Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին համարներից:

(Հ. Ա. Կ.) 77—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱՅՎԵՐԴԵԱՆ

Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների, ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ին մինչև 8-ը: Կուկիա, Սեմեօնօվսկի փողոց № 16:

(ու. Կ. Ե.) 10—20

ԲԺԻՇԿ
Լևոն Օհանջանեան

Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կաղեսկայեա փողոցի, տուն Թաժմիշեանի: Մուտքը Կաղեսկի փողոցից № 2.

(ա. օ.) 195—300

ՀՐԱՒԷՐ

Թիֆլիսի Տափի-Թաղի ս. Գէորգ եկեղեցու 21 տարեկան հասակն առած երկու սեռի ծխականները 2-րդ անգամ հրաւիրվում են՝ շնորհ բերել ամսիս 23-ին ս. Նշանի դպրոցը, որպէսզի երկու պատուիրակ ընտրեն ռուսահայոց առաջին եկեղեցական կենտրոնական ժողովի համար՝ չորս պատգամաւորների ընտրութեանը Թիֆլիսում մասնակցելու նպատակով: Ժողովի սկիզբը կը լինի ժամը 11-ին:

Յովհաննէս աւագ քահ. Մարտիրոսեանց
2—2

ՀՐԱՒԷՐ

Վեհափառ Կաթողիկոսի սրբատառ կոնդակների համաձայն, Թեմիս առաջնորդի կարգադրութեամբ, Թիֆլիսի Կաթուղիկէ ս. Աստուածածին (Մայդանի ս. Գէորգ) եկեղեցու 21 տարին լրացրած՝ արական և իգական բոլոր ծխականները պիտի ընտրեն երեք պատուիրակ՝ ռուսահայ եկեղեցական-կենտրոնական ժողովի պատգամաւորական ընտրութեան համար. ուստի յարգելի ծխականները հրաւիրվում են շնորհ բերել յուլիսի 23-ին, կիրակի օրը, առաւօտեան 10½ ժամին նոյն եկեղեցին երկրորդ անգամ ընտրութեանը մասնակցելու:

Ժողովը կանոնաւոր կը համարվի որքան ընտրողներ էլ ներկայ լինեն:

Միաբան Կաթուղիկէ եկեղեցու
Ստեփաննոս աւագ քահանայ Սամուէլեանց
(Հ. Չ. Կ.) 3—3

ԹԱՐԳՄԱՆՎՈՒՄ ԵՆ

և շուտով լոյս կը տեսնեն՝

1) Д. Г.—«Что такое учредительное Собраніе?».
2) Θ. А. Волькенштейнъ.—«Право и произволъ».
3) Л. Кожинъ.—«Современныя политическія партіи».

Ս. Ե.

„ՆՈՄԵՐԱ ՑԵՆՏՐԱԼ"

մակնանունով: Գները 70 կօպէկից մինչև 2 րուբլի: Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով:

Գանձակում տեղի ունեցած ընդհարումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրոնական ՀԻՒՐԱՆՈՑՍ շքեղ կահկարասիներով Թիֆլիս, Պուշկինսկի փողոցի վրա № 23, պրավօսլաւնի հոգևոր սեմինարիայի դիմաց

Ալէքսանդր Ցարութինով
(Ե. Կ. Ե.) 39—100

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ
Ռուսերէնից Հայերէն
Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ

Գինն է 8 ր., փառակազմ 9 ր., ճանապարհածախսով 10 ր., հեղինակին դիմողները ճանապարհածախս չեն վճարում: Լիակատար բառարան հայերէնից ռուսերէն: Բաժանորդագինն է 5 ր., առաջին բառարանիս բաժանորդների համար 4 ր.: Գրպանի բառարան ռուսերէնից հայերէն: Բաժանորդագինն է 2 ր. 50 կ.:

Դիմել ուղղակի հեղինակին հետևեալ պարզ հասցէով՝ Тифлисъ, лексикографу А. Дагбашяну. Անձամբ հեղինակի հետ տեսնվել կարելի է առաւօտեան ժամերին (Барятинская ул. № 6 кв. Германа).

(Կ. Ե. Հ.) 1—5

Մի քանի օրից յետոյ լոյս կը տեսնի
ԴԱՍԱԳԻՐՔ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ
II քաղաքական մաս
(Ասիա, Ամերիկա, Աֆրիկա և Աւստրալիա)
Կազմեց Լեւոն Բաբայեան

Մինչև օգոստոսի վերջը պատրաստ կը լինեն և դասագրքի միւս մասերը:

(Կ. Չ.) 1—5

Ռուսահայոց դպրոցների ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ յայտարարում է ի գիտութիւն հայոց դպրոցների հոգաբարձուների և ուսուցիչների, որ՝ համաձայն Ուսուցչական Համագումարի որոշման, յանձն է առնում առաջարկել հոգաբարձուներին վարժուհիներ եւ ուսուցիչներ: Դիմել՝ Центральному Совѣту армянскихъ учителей, Թիֆլիս, Ներսիսեան Դպրոց:

(Կ. Հ. Կ.) 1—3

„Գուտտենբերգ"

գրավաճառանոցում վաճառվում են.

Վաղով Ի, Լծի տակ, պատմ. վէպ II մաս 70 կ.
Բակուրցեվ Ա. Տ. Ինչպէս պէտք է ընտրել ժողովրդական ներկայացուցիչներ, Թարգմ. Ա. Տէր-Առաքելեանց—2 կ.
Ատրպետ. Հողատիրութիւնը Կովկասում. հետազօտութիւն—10 կ.
Մարքս Կարլ. Վարձու աշխատանք և կապիտալ, Թարգմ. Ստ. Շահումեան—10 կ.
Բաղդասարեան Ե. Ա. Էլէգիա 35 կ.
Ֆեդօրօվիչ Ս. Ժողովրդական փողեր, Թարգ. ռուսերէնից—5 կ.
Դանիէլբէգեան Ս. Կանանց հարցը և նրա ծագելու պատճառները—20 կ.
Շիրվանեան Ա. Թեապարտը. I և II մաս—1 ր. 25 կ.
Կարմելիւկ. Նոր լերան քարոզը, Թարգմ. ռուսեր. Տ.-Յ.—2 կ.
Կաուցկի Կարլ. Պետական Դուման, Թարգմ. Ռ. Դաշտօյեանի—3 կ.
Չերնօվ Վ. Գիւղացին և բանւորը որպէս տնտեսական կատէգօրիաներ, Թարգմ. ռուսերէնից Լ. Ն.—15 կ.
Գի-դը- Մօպասան. Մի կեանք. Լև Տօլստօյի առաջաբանով, Թարգ. Ս. Տէր-Անանեան—1 ր.
Զալխուշեան Գր. Հայկական հարցը Ռուսաստանում, Թարգ. Ս. Նազարեան—15 կ.
Սպարապետեան Ար. Թուաբանական խնդիրներ և օրինակներ, պրակ ա.—30 կ.
Աղայեան Ղ. Մայրենի լեզու, չորրորդ գիրք—90 կօպէկ.
Корханиди, Живое слово, ч. I. 25 к.
Քերականութիւն, Ս. Պալասանեանի—70 կ.
Գծագրութեան օրինակներ, Լևոնեանի—20 կ.

Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ Гуттенбергъ, Г. И. Галустянцу. 1—2

ՆԿԱՐԻՉ Ա. ՖԷԹՎԱՃԵԱՆԻ
ակվարելներից ֆաքսիմիլէ պատրաստված
ԱՆԻԻ ՏԵՍԱՐԱՆՆԵՐԻՑ
Գունատիպ ալբօմներ

տպագրվել են արտասահմանից և ծախվում են Թիֆլիսում՝ Գուտտենբերգի գրավաճառանոցում, Գնունու և Մարիմի վիմագրական արհեստանոցում, Բաթումում՝ Արմենակ Ֆեթվաճեանի մօտ, Օդեսսայում՝ Զարեհ Սարգսեանի մօտ:

Ալբօմի հատը 1 րուբ. 20 կօպ.:

Անիի պատկերները ծախվում են և իբրև պօստ-կարտեր, բաց նամակներ, զոյգը 15 կօպ., ժանրային պատկերներ՝ հատը 10 կ., հագարով գնողները կը ստանան 20% զեղչ: Պօստի, ծրարման և փոխադրութեան հարկաւորված ծախսերը գնողների հաշւով են:

Արտասահմանում ապրողներին ձեռնտու է դիմել Վիեննա՝ Vienne, Boghos Kürkdjian-ին:

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Վաճառվում է Թիֆլիսի բոլոր գրավաճառանոցներում
ՀԻՒԱՆԴ ՄԱՐԴԸ
(Բ. ՑՏԵՐՆԻ)
ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ
գերմ. Թարգմ.
Լ. ԲԱՔԱՅԵԱՆԻ

առանձին գրքերով լոյս են տեսել Թարգմանչի նաև հետևեալ աշխատութիւնները

1. Զ. Վերգա՝ Գիւղական Ասպետութիւն, Թարգմ. գերմ. 15 կ.:
2. Մ. Նորդաու՝ Հայրենասէր Իտալացին, Թարգմ. գերմ. 10 կ.:
3. Մ. Հալբէ՝ Միստեմ, Թարգմ. գերմ. 15 կ.
4. Ի. Պէնօ՝ Երկու Նովէլլա, Թարգմ. գերմ. 10 կ.
5. Հ. Իբսէնի՝ Հասարակութեան Նեցուկները Թարգմ. գերմ. դրամա. 50 կ.

(ամ. օր.)

Մի հայ օրիորդ

որ աւարտել է իր ուսումը Շուշու Մարիամեան պրօգիմնազիայում և վերջացրել է հաշուապահական կուրսերը, որոնում է իր համար համապատասխան պաշտօն, Թիֆլիսի գրասենեակներում, կամ մագազիններում կասսիրշայի պաշտօն: Հասցէն «Մշակի» խմբագրութիւն:

3—3

ԵՐԿՐՈՐԴ ԵՒ ՎԵՐՋԻՆ ԺՈՂՈՎ

Կիրակի, յուլիսի, 23-ին պատարագից յետոյ, առաւօտեան ժամը 11½-ին, Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցում նշանակված է ծխական ժողով՝

1) Հոգաբարձութեան 1905/6 դպրոցական միամեայ հաշիւը և 1906/7 թւերի նախահաշիւը քննելու.

2) Ընտրելու մի լիազօր, որը կը մասնակցի Ազգային Կենտրոնական Ժողովի համար 4 պատգամաւորներ ընտրելու:

Սրանով Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցու պատկանող բոլոր 21 տարեկանից բարձր ծխականները, առանց սեռի և դասակարգի խտրութեան, հրաւիրվում են մասնակցելու այդ ժողովին: Ծխականներին առանձին հրաւիրաթերթեր չեն ուղարկվելու:

Սարգիս քահ. Շիօյեան
Երէցփոխ՝ Ստ. Մնացականեան
(ու. Կ.) 2—2

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱՒԱՐՏ
(ԻՐԱՒԱԲԱՆ)

մի երիտասարդ ցանկանում է ստանձնել աւագ ուսուցչի պաշտօն հայոց ծխական դըպրոցներում: Ցանկալի Սև ծովի ափերին: Պայմանների համար դիմել հետևեալ հասցէով. Въ гор. Ахалкалаки. Оганесу Пичикянцу.

2—5

Նոր-Բայազէտի հայոց ծխական երկդասեան երկսեռ ուսումնարանների համար հարկաւոր մի ԱՒԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ճեմարանաւարտ կամ դպրանոցաւարտ, շաբաթական 17 դասով, ռոճիկ գումարը տարեկան 700 րուբլի ռոճիկով. ցանկացողներն կարող են դիմել նոյն դպրոցի հոգաբարձութեան, այս հասցէով. Новобаязетъ, попечительству армянскаго училища.

Որովհետև հոգաբարձութիւնը նոր աւագ ուսուցչի հետ պէտք է կազմի ուսուցչական խումբը, ուստի հին ուսուցչական խմբի բոլոր անդամներն համարվում են արձակված.

Անդամք հոգաբարձութեան՝ Հ. Տէր-Մկրտչեանց, Խ. Բունիաթեանց, Գ. Բուրումեանց
(ա. օ.) 6—10

Արտանօվօղակի հայոց եկեղեցական ծխական դպրոցի հոգաբարձութիւնը սրանով յայտարարում է, որ դպրոցիս համար ուսուցիչներ արդէն վարձված են: Այն ուսուցիչների դիմումներին, որոնց չէ պատասխանված, ազատ են:

1—3

Ս. Գ. Շերմազանեան

Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը Երևանեան հրապարակ, տ. Գուրգէնովի № 7, պօդեզդ նոտար Մղեբրովի: (Ե.Հ.Չ.) 30—100

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով).

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գի
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր. երեկ.
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գի
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գի
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցե
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գի
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 18 ր. գի
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. ա
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր. գի
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր. գի
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր. գի
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր. գի
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր. [illegible]
Կարս հասնելը	4 » 23 » »	—	—	8 ժ. [illegible]

„ՎԵՐՍԱԼ"

[ՀԻՒՐԱՆՈՑ]

Քաղաքի ամենակենտրօնական մասում
Վօրօնցօվի արձանի մօտ,

ուր շաղկապվում են տրամվայի բոլոր գծերը: Համարները սկսած 1 րուբլուց և աւելի: Յարմար կերպով կահաւորված համարներ՝ բոլոր յարմարութիւններով: Բաղանիք, դուշ, տէլէֆօն, էլէկտրական լուսաւորութիւն ընդհանուր շինութեան մէջ: Օդի և լոյսի առատութիւն: Կատարեալ մաքրութիւն և կարգապահութիւն: Խնդրում ենք չը լսել գործակալներին, երբ թէ ազատ համար չը կայ և այլն:

(Կ. Ե. Հ.) 1—24

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող
ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնատուական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում:

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4 ամսում:

Ներկայ տարվայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվելու է ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая экономія) և որոշ վճարով կամաւոր սղագրութիւն (стенографія):

Ընդունելութիւնն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան և 9-ից մինչև 11-ը առաւօտեան: Պարապմունքները սկսվելու են սեպտեմբերի 15-ից, պարբերական ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ: Ծրագիրն ուղարկվում է ձրի:

Դասընթացը աւարտողներին տրվում են ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատտեստատներ:

Դրանից անկախ, բացված է քիչ պատրաստութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար:

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում Н. В. Абраамяну, Николаевская ул. № 22, ամենայն օր:

Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում: Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու. Գինն է 3 ր. 50 կօպէկ: (Հ. Կ. Ե.) 4—[illegible]

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

(Тифлисъ, Сололакъ, Лермонтовская ул. № 15)

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ:

Աւանդելի առարկաները սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն. 2) Առևտրական Թուաբանութիւն. 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային). 4) Թ[illegible]բանութիւն համրիչի վրա. 5) Առևտրական Թղթակցութիւն. 6) Առևտրական և [illegible]հակի կանոնագրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը:

Ձրի ուսուցում ցանկացողներին գրող մեքենայի վրա: Պարապմունքները սերում լինում են ամեն օր:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի Ամենայն օր, առաւօտեան ժամը 10-ից մինչև 12-ը, և երեկոյեան 4-ից մինչև [illegible]մը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիգօնովի տանը, Սերգիևսկայա և Լերմոնտովսկայա փողոցների անկիւնում: Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ С. П. Мануэльянцу. (Կ. Չ.) 6—25

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ» — «MESSAGERIES MARITIMES».

31-ին յուլիսի, (13 օգոստոսի Ն. տ.) մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 5-ին, առաջնակարգ «La Crimée» շոգենաւը, հանդիպելով՝ Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլիս, Դ[illegible]գանէլ, Զմիւռնիա, Պիրէյ, Քանէյ, Մարսէյլ, Հավր և Լոնդոն:

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչև Պարիզ, նոյնպէս և Շանհայ, ([illegible]նաստանում) Հեռաւոր Արևելք գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում կրկ[illegible] պակասեցրած գներով:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Ցակրեանին, նախկին Արծրունու գալերեա թիւ 127 գրասենեակը, հեռախօս՝ թիւ 608: Գրասենեակը բաց է 9—1 ժամը ցերեկվայ 5—7-ը երեկոյեան, բացի կիրակի օրերից: (Կ.) 1—1

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ըկ.
Электропечатня типографскаго Т—ва «Гермесъ» Малак. ул. № 9